

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ-ի Խորհրդի
«07» մայիսի 2024թ. որոշմամբ
Խորհրդի Նախագահ՝

Գ. Զաքարյան _____

ստորագրություն

Ուժի մեջ է «01» հունիսի 2024 թվականից



«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ»

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԻՑ ԴՈՒՐՍ

ՄԵԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	2
ԲԱԺԻՆ 1.....	3
1. ՆՊԱՏԱԿԸ	3
2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ	6
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ (ՌԻՍԿԵՐ)	6
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԶՄՓԵՐ.....	6
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ.....	6
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ	7
8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	9
9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԴԱԴԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ	9
10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	12
11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ Ի ՀԱՅՏ ԳԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	15
12. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐ.....	16
13. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ /ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ).....	17
14. ԳՐԱՎՈՐ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ.....	18
15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ	18
ԲԱԺԻՆ 2	18
16. ԲԺՇԿԱԿԱՆ, ԲԺՇԿԱ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	18
ԲԱԺԻՆ 3	24
17. ՈՒՂԵՔԵՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	24
ԲԱԺԻՆ 4	26
18. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿՈՐՈՒՍՏ ԿԱՄ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ.....	26
ԲԱԺԻՆ 5.....	27
19. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ	27
ԲԱԺԻՆ 6	28
20. ԶՎԵՐԹԻ ՀԵՏԱՁԳՈՒՄ	28
ԲԱԺԻՆ 7.....	30
21. ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԵՂԱՐԿՈՒՄ	30

ԲԱԺԻՆ 1

1. ՆՊԱՏԱԿԸ

1.1. «Մշտական բնակության երկրից դուրս մեկնող անձանց աջակցության ապահովագրության» պայմանները (այսուհետ՝ **Պայմաններ**) կազմված են ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.2. Սույն Պայմանների հիման վրա, «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ-ն (այսուհետ՝ **Ապահովագրող**) գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ (այսուհետ՝ **Ապահովադիր**) կնքում է մշտական բնակության երկրից դուրս մեկնող անձանց (այսուհետ՝ **Ապահովագրված անձ**) Աջակցության ապահովագրության պայմանագրեր (այսուհետ՝ **Պայմանագիր/Վկայագիր**):

1.3. Պայմանագրի կողմեր են հանդիսանում Աջակցության ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրողը, Ապահովադիրը և Ապահովագրված անձը (այսուհետ՝ **Կողմեր**):

1.4. Պայմանագիրը/Վկայագիրը Կողմերի համաձայնությամբ կարող է ներառել այլ դրույթներ: Ապահովագրության Պայմանների և Պայմանագրի/Վկայագրի դրույթների միջև հակասությունների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է Պայմանագրին/Վկայագրին:

1.5. Պայմանագրի/Վկայագրի դրույթներն ու պահանջները պարտադիր են Կողմերի համար: Այն դեպքում, երբ Ապահովագրված անձ է հանդիսանում Ապահովադիրից տարբերվող այլ անձ, ապա Ապահովադիրը պարտավոր է տեղեկացնել Ապահովագրված անձին՝ Պայմանագրով/Վկայագրով և Պայմաններով նախատեսված պարտականությունների անվերապահ կատարման մասին, հակառակ դեպքում այդ պարտականությունների չկատարման առնչությամբ ապահովագրական հատուցումների հետ կապված բացասական հետևանքների պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Ապահովագրող**՝ «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ,

2.2. **Ապահովադիր**՝ Ապահովագրողի հետ Պայմանագիր/Վկայագիր կնքած գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձ,

2.3. **Ապահովագրված անձ** - ֆիզիկական անձ, որի տարիքը Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին չի գերազանցում 85 տարեկանը, որը մշտապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում, և որի հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի/Վկայագրի գրի առարկա:

2.4. **Ուղևորություն**՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի Ապահովագրության տարածք մեկնումը և Ապահովագրության տարածքում գտնվելը: Ուղևորության սկիզբ է համարվում Ապահովագրված անձի Ապահովագրության տարածքի պետական սահմանը դեպի մուտք հատելը, իսկ ավարտը՝ Ապահովագրության տարածքի պետական սահմանը դեպի ելք հատելը, որոնք հաստատվում են Ապահովագրված անձի անձնագրում սահմանապահ ծառայությունների կողմից կատարված համապատասխան նշումով,

2.5. **Ապահովագրության պայմանագիր** (վկայագիր)՝ սույն Պայմանների հիման վրա կնքված Ապահովագրողի և Ապահովադիրի միջև գրավոր համաձայնություն՝ հօգուտ Ապահովագրված անձի,

2.6. **Ապահովագրության օրերի** քանակ՝ Ուղևորության տևողությունը, որի ընթացքում գործում է ապահովագրական ծածկույթը: Ապահովագրության օրերի քանակը նվազեցվում է Ապահովագրված անձի Ապահովագրության տարածքում գտնվելու օրերի քանակով: Ապահովագրության օրերի քանակը լրանալու ամսաթվի ժամը 23:59 Պայմանագրի գործողությունը դադարում է,

2.7. Ապահովագրության տարածք՝ ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված երկրի, աշխարհագրական տարածաշրջանների, երկրների խմբի տարածք կամ ճանապարհորդության երթուղի, որի սահմաններում Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը կրում է հատուցում իրականացնելու պատասխանատվություն,

2.8. Սպասարկող ընկերություն՝ Ապահովագրողի հետ համագործակցող կազմակերպություն, որը շուրջօրյա, շաբաթական 7 օր, կազմակերպում և իրականացնում է սույն Պայմանագրով նախատեսված բժշկական և այլ ծառայությունները: Սպասարկող ընկերության տվյալները նշվում են Վկայագրում,

2.9. Կլինիկաներ՝ բժշկական հաստատություններ, այդ թվում ամբուլատոր, ստացիոնար, մասնավոր բժիշկներ, որոնք ունեն բժշկական գործունեության իրականացման համապատասխան լիցենզիա (թույլտվություն) այն երկրի օրենքին համապատասխան, որտեղ գտնվում են (կազմակերպվում է Սպասարկող ընկերության միջոցով),

2.10. Բժիշկ՝ համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն բժշկական կրթություն ստացած մասնագետ, ով գործում է իր լիցենզիայի (սերտիֆիկատի) հիման վրա այն երկրի օրենսդրությանը համապատասխան, որտեղ մատուցվում են բժշկական ծառայություններ, , (կազմակերպվում է Սպասարկող ընկերության միջոցով)

2.11. Ապահովագրական պատահար՝ Ապահովագրական պատահարն ապահովագրական պայմանագրով նախատեսված դեպքն է կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է ապահովադրին կամ շահառուին վճարել ապահովագրական հատուցում,

2.12. Ապահովագրական գումար՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է Ապահովագրական պատահարի տեղի ունենալու պարագայում, Պայմանագրով/Վկայագրով նախատեսված կարգով վճարել Ապահովագրական հատուցում,

2.13. Հատուցման սահմանաչափ՝ ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով որևէ Ապահովագրական ռիսկի համար նախատեսված Ապահովագրական հատուցման գումարի սահման, որը կիրառվում է մեկ Ապահովագրական պատահարի հաշվարկով կամ ապահովագրության Պայմանագրի ողջ ժամանակահատվածի համար,

2.14. Չհատուցվող գումար (Ֆրանշիզա)՝ Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցման մեջ, որը սահմանվում է ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով՝ կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Չհատուցվող գումարի տեսակներն են՝

1) պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասը չի գերազանցում ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով նախատեսված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը.

2) ոչ պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է որոշակի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորուստի ընդհանուր չափից,

2.15. Ապահովագրական ծրագիր՝ Պայմանագրի մեջ ներառված ապահովագրական ծածկույթներ (ռիսկեր),

2.16. Սուր հիվանդություն՝ հիվանդություն կամ առողջական վիճակ, որն առաջացել է հանկարծակի և պահանջում է հրատապ բժշկական օգնություն,

2.17. Անհետաձգելի բժշկական վիճակ՝ վիճակ, որը պահանջում է շտապ բժշկական օգնություն, և որի բացակայության դեպքում կարող է առաջանալ Ապահովագրված անձի մահը կամ անաշխատունակությունը,

2.18. Անհետաձգելի/Հրատապ բժշկական օգնություն՝ բժշկական օգնություն, որը ցուցաբերվում է Սուր հիվանդությունների, վիճակների, Քրոնիկ հիվանդությունների սրացման համար՝ Ապահովագրված անձի կյանքին և/կամ առողջությանը սպառնալիք ներկայացնելու դեպքում,

2.19. Քրոնիկ հիվանդություն՝ հիվանդություն, որն ունի մշտական ընթացք և կարող է պահանջել երկարատև պահպանողական (աջակցող) դեղորայքային բուժում և/կամ դինամիկ վերահսկում (անկախ առաջին անգամ ախտորոշման ժամկետից),

2.20. Քրոնիկ հիվանդության սրացում՝ Քրոնիկ հիվանդության փուլ, որը բնորոշվում է նոր ախտանիշերի առաջացումով, որոնք պահանջում են Հրատապ բժշկական օգնության ցուցաբերում: Քրոնիկ հիվանդության սրացման դեղորայքային բուժման կապակցությամբ Ապահովագրողը հատուցում է այդ բուժման համար անհրաժեշտ դեղորայքի ձեռքբերման ծախսերը՝ բուժումը սկսելու պահից առավելագույնը մինչև 14 (տասնչորս) օր՝ յուրաքանչյուր սրացման համար:

Քրոնիկ հիվանդության սրացում չի համարվում Քրոնիկ հիվանդության հետևանքով Ապահովագրված անձի առողջական վիճակի այնպիսի վատթարացումը, որն ընդամենը պահանջում է նախկինում նշանակված դեղորայքի չափաբաժնի փոփոխումը և/կամ դրա փոխարինումը առավել ազդեցիկ դեղորայքով,

2.21. Դժբախտ պատահար՝ որևէ հիվանդությունով չպայմանավորված, Ապահովագրված անձի կամքից անկախ տեղի ունեցած արտաքին գործոնների հանկարծակի և կարճատև (մինչև 24 ժամ) ազդեցությունը, որի հետևանքով Ապահովագրված անձը ստացել է մարմնական վնասվածքներ (կտրվածքներ, այրվածքներ և այլն) կամ մահացել է: Դժբախտ պատահար չի համարվում սուր, քրոնիկ, օնկոլոգիական և ժառանգական հիվանդությունների ցանկացած ձևերը,

2.22. Փոխադրող՝ գրանցված փոխադրող, որը համապատասխան լցենզիայի հիման վրա զբաղվում է ջրային կամ օդային ուղևորների փոխադրմամբ,

2.23. Ուղեբեռ՝ Ուղևորության ժամանակ Ապահովագրված անձի անձնական իրերը, որոնք տեղափոխվում են նրա մշտական բնակության երկրից դուրս, գրանցված են անձնագրային հսկողության կետում և հանձնված են Փոխադրողին: Ուղեբեռ է համարվում նաև Ապահովագրված անձի մշտական բնակության երկրից դուրս ձեռք բերված իրերը,

2.24. Պայմանական միավոր (ՊՄ)՝ Պայմանագրում նշված Ապահովագրական գումարի արտարժույթի մեկ միավոր,

2.25. Մերձավոր հարազատներ/Ընտանիքի անդամներ՝ օրինական կին/ամուսին, ծնողներ, երեխաներ (այդ թվում որդեգրված), քույր, եղբայր,

2.26. Տուրօպերատոր՝ իրավաբանական անձ, որն իրականացնում է տուրիստական փաթեթների ձևակերպում, խթանում և վաճառք,

2.27. Տուրիստական գործակալություն՝ իրավաբանական անձ կան անհատ ձեռներեց, որն իրականացնում է տուրիստական փաթեթների ձևակերպում, խթանում և վաճառք,

2.28. Տուրիստական փաթեթ՝ ծառայությունների, աշխատանքների, ապրանքների փաթեթ, որոնք անհրաժեշտ են Ուղևորության ընթացքում զբոսաշրջիկների կարիքները բավարարելու համար և որոնք ներառում են՝ տրանսպորտային միջոց, տեղավորում, փոխադրում, էքսկուրսիոն ծառայությունների սպասարկում:

2.29. Փաստաթղթի բնօրինակ՝ հաստատող վավերապայմաններ (ստորագրություն, կնիք) և ամսաթիվ ունեցող՝ համապատասխան ձևաթղթով կազմված փաստաթուղթ:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Ապահովագրության օբյեկտ է հանդիսանում Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի մշտական բնակության երկրից դուրս գտնվելու ժամանակ ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ զբոսաշրջության, գործուղման, և այլ նպատակներով, բայց ոչ ապրելու վայրի փոփոխման կամ ժամանակավոր բնակության երկրի Կլիմիկաներում բժշկական օգնություն ստանալու նպատակով:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ (ՌԻՍԿԵՐ)

4.1. Ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրով/Վկայագրով նախատեսված իրադարձությունը, որի վրա հասնելու արդյունքում առաջանում է Ապահովագրողի Ապահովագրական հատուցում իրականացնելու պարտականությունը:

4.2. Ապահովագրական ռիսկ է հանդիսանում առաջանալու հավանականության և պատահականության նշաններ ունեցող ենթադրվող իրադարձությունը, որի ի հայտ գալու համար իրականացվում է ապահովագրությունը:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԵՐ

5.1. Ապահովագրական գումար՝ Պայմանագրով նախատեսված Ապահովագրական հատուցման առավելագույն չափ: Յուրաքանչյուր Ապահովագրական հատուցումից հետո Ապահովագրական գումարը նվազում է տրամադրված հատուցման գումարի չափով:

5.2. Պայմանագրի/Վկայագրի մեջ կարող են նախատեսվել Ապահովագրական հատուցման սահմանաչափեր, այդ թվում առանձին Ապահովագրական ծածկույթների (ռիսկերի), մատուցվող ծառայությունների համար, ինչպես նաև կիրառվել տարիքային սահմանափակումներ:

5.3. Եթե բուժման կամ այլ ծախսերը գերազանցում են ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված Ապահովագրական գումարը (Հատուցման սահմանաչափը), գերազանցող գումարը Ապահովագրված անձը վճարում է անձամբ:

5.4. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրական հատուցման գումարը բոլոր Ապահովագրական պատահարների համար չի կարող գերազանցել Պայմանագրով/Վկայագրով սահմանված Ապահովագրական գումարի չափը:

5.5. Ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար (ֆրանշիզա):

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ

6.1. Ապահովագրավճարը Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափով և կարգով Ապահովադրի կողմից Ապահովագրողին վճարվելիք գումարն է:

6.2. Ապահովագրավճարը սահմանվում է Ապահովագրողի կողմից ըստ Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին գործող սակագների, և հաշվարկվում է ըստ Ապահովադրի կողմից ընտրած Ապահովագրական ծրագրի և Ապահովագրության ժամկետի:

6.3. Ապահովագրավճարը Ապահովադրի կողմից վճարվում է միանվագ՝ մինչև Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

6.4. Ապահովագրավճարը կարող է վճարվել կանխիկ՝ Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին, կամ անկանխիկ եղանակով՝ փոխանցելով Ապահովագրողի հաշվարկային հաշվին:

6.5. Ապահովագրական սակագինը Ապահովագրավճարի չափն է Ապահովագրական գումարի միավորից՝ հաշվի առնելով ապահովագրության ծավալը և ապահովագրված ռիսկի բնույթը: Ապահովագրական սակագինը սահմանվում է Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսներով:

6.6. Եթե Ապահովագրավճարը չի վճարվել Պայմանագրով/Վկայագրով սահմանված պայմաններով և ժամկետներում, ապա Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է ուժի մեջ չմտած և չի առաջացնում Ապահովագրողի կողմից որևէ հատուցման պարտականություն:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է գրավոր՝ նախքան Ապահովագրված անձի Ապահովագրության տարածք մուտք գործելը: Ուղևորության սկզբի ամսաթվից հետո կնքված Պայմանագրերը համարվում են անվավեր:

7.2. Ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր կնքելու համար Ապահովագիրը Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները՝

7.2.1. Ապահովագրված անձի արտասահման մեկնելու անձը հաստատող փաստաթուղթը և հեռախոսահամարը,

7.2.2. իրավաբանական անձ Ապահովագրի դեպքում նրա անվանումը, իրավաբանական հասցեն, հեռախոսահամարը, բանկային տվյալները և Ապահովագրված անձի/անձանց տվյալները,

7.2.3. Ուղևորության սկիզբը և ավարտը, Ապահովագրության օրերի քանակը,

7.2.4. երկիրը և/կամ տարածաշրջանը, որտեղ պետք է գործի ապահովագրությունը,

7.2.5. Ուղևորության նպատակը,

7.2.6. մասնագիտությունը և ենթադրելի գործունեության տեսակը, եթե Ապահովագրված անձը մեկնում է աշխատելու նպատակով,

7.2.7. սպորտի կամ սպորտային մրցումների տեսակը, որոնցում մասնակցելու է Ապահովագրված անձը,

7.2.8. ընտրված Ապահովագրության ծրագիրը:

7.3. Ապահովագրի կողմից հայտնած տեղեկությունների և փաստաթղթերի հիման վրա Ապահովագրողն իրավունք ունի մերժել Ապահովագրին ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր կնքելու համար կամ առաջարկել Ապահովագրական ռիսկերի սահմանափակում:

7.4. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովագիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան ի հայտ գալուց 24 ժամվա ընթացքում, Ապահովագրողին գրավոր տեղեկացնել Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովագրողին հայտնած էական հանգամանքների փոփոխությունների մասին, որոնք մեծացնում են Ապահովագրական ռիսկը: Էական են համարվում Ուղևորության նպատակի փոփոխությունը, հիվանդությունը, առողջական վիճակի վատթարացումը, գործունեության փոփոխությունը, Ապահովագրության տարածքի փոփոխությունը, սպորտով կամ ակտիվ հանգստով զբաղվելը: Սույն պարտականությունը հավասարապես տարածվում է Ապահովագրված անձի վրա:

7.5. Կնքելով ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր Ապահովագրված անձը տալիս է իր գրավոր համաձայնությունը Ապահովագրողին և/կամ Սպասարկող ընկերությանը և/կամ նրանց ներկայացուցիչներին իր առողջական վիճակի և ցուցաբերված բժշկական ծառայությունների մասին ցանկացած տեղեկատվության ստացման, բժշկական փաստաթղթերի հետ ծանոթացման, դրանց պատճենների ստացման համար՝ ազատելով բուժող Բժշկին/Կլինիկաներին բժշկական գաղտնիքի պահպանման պարտականություններից:

7.6. Անհատական ապահովագրության Պայմանագիր/Վկայագիրը կարող է կնքվել նաև էլեկտրոնային փաստաթղթի տեսքով: Այդ դեպքում Ապահովագիրը Ապահովագրողին է ուղարկում Պայմանագիր/Վկայագիր կնքելու էլեկտրոնային դիմում՝ Ապահովագրողի պաշտոնական կայքի միջոցով: Ապահովագիրը Ապահովագրավճարը վճարում է

ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի Պայմաններին ծանոթանալուց հետո՝ դրանով հաստատելով իր համաձայնությունը Ապահովագրողի կողմից առաջարկվող պայմաններով Պայմանագրի/Վկայագրի կնքելու համար:

7.7. Սույն Պայմանների հիման վրա Պայմանագիր/Վկայագիր կնքելու ժամանակ, Ապահովադիրը տալիս է իր համաձայնություն առ այն, որ Ապահովագրողը Պայմանագրի/Վկայագրի ողջ գործողության ընթացքում և դրա ավարտից հետո 10 (տասը) տարվա ընթացքում իրավունք ունի մշակել Պայմանագրում/Վկայագրում նշված ֆիզիկական անձանց անձնական տվյալները՝ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կատարման, վիճակագրական և վերլուծական նպատակներով, և ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման նպատակով: Ապահովադիրը կրում է անձնական պատասխանատվություն ֆիզիկական անձանց, Շահառուների անձնական տվյալների մշակման համաձայնության համար:

Սույն Պայմանների հիման վրա Պայմանագիր/Վկայագիր կնքելու ժամանակ, Ապահովադիրը նաև տալիս է իր համաձայնությունը Ապահովագրողի այլ ապահովագրատեսակների և ծառայությունների մասին իրեն տեղեկացնելու համար, ինչպես նաև Ապահովագրողի հետ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի վերակնքելու պայմանների համար:

Վերը նշված նպատակների համար Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագրի/Վկայագրի կնքման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց, ում հետ Ապահովագրողն ունի կնքված համապատասխան համաձայնություն, որն ապահովում է անձնական տվյալների հուսալի պաշտպանությունը և անօրինական բացահայտման կանխումը:

7.8. Ապահովագրողը պարտավորվում է ապահովել Ապահովադրի անձնական տվյալների անվտանգությունը և գաղտնիությունը սույն կետով նշված նպատակներից բացի այլ նպատակներով:

7.9. Անձնական տվյալների մշակման համաձայնությունը կարող է հետ կանչվել անձնական տվյալների սուբյեկտի կողմից ամբողջությամբ կամ մասնակի՝ այլ ապահովագրատեսակների մասով տեղեկացման մասով, Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու միջոցով, որտեղ հստակ սահմանված կլինի նշված դիմումի Ապահովագրողի ստացման ամսաթիվը:

Անձնական տվյալների սուբյեկտի կողմից համաձայնության ամբողջությամբ հետ կանչման դեպքում ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը այդ անձի նկատմամբ դադարում է, իսկ եթե տվյալ սուբյեկտը հանդիսանում է Ապահովադիրը, ապա ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է ամբողջությամբ: Այդ դեպքում ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է վաղաժամկետ՝ տվյալների մշակման համաձայնության հետ կանչման համապատասխան դիմումը ստանալու Ապահովագրողի կողմից ստանալու ամսաթվից:

7.10. Կնքելով ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր Ապահովադիրը տալիս է իր համաձայնությունը Ապահովագրողին, ՀՀ գործող օրենսդրության համաձայն, ստանալ տեղեկատվություն Ապահովադրի վարկային պատմության վերաբերյալ: Նշված համաձայնությունը Ապահովադրի կողմից Ապահովագրողին տրվում է ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքման պահից՝ ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված տվյալների և տեղեկատվության ստուգման և Ապահովադրի վերաբերյալ այլ տեղեկատվության ստացման համար:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

8.1. Ապահովագրված անձը կարող է ստանալ Պայմանագրով/Վկայագրով սահմանված ծառայությունները իր մշտական բնակության երկրից դուրս՝ Պայմանագրում/Վկայագրում նշված տարածքում (բացառությամբ Բաժին 7-ի «Ուղեվորության չեղարկում» ծածկույթի, որը գործում է Ապահովագրված անձի մշտական բնակության երկրում): Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ծառայությունները տրամադրվում են Ապահովագրական պատահարը ի հայտ գալու երկրում:

8.2. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը գործում է Պայմանագրում/Վկայագրում նշված երկրում կամ աշխարհագրական տարածաշրջանների երկրների խմբում, բացառությամբ՝

- ՀՀ և ԼՂՀ տարածքների,
- այն երկրների, որտեղ Ապահովագրված անձն ունի քաղաքացիություն (այդ թվում՝ երկրորդ քաղաքացիություն) կամ ժամանակավոր կացության իրավունք,
- այն երկրների, որոնց նկատմամբ կիրառվում են ՄԱԿ-ի տնտեսական և/կամ ռազմական սանկցիաները:

8.3. Պայմանագրով/Վկայագրով կարող են սահմանվել Ապահովագրական ծածկույթի գործողության տարածքների հետևյալ տարբերակները՝

8.3.1. **Տարածաշրջան 1՝** Եվրոպական երկրներ, Մերձավոր Արևելք, Աֆրիկա,

8.3.2. **Տարածաշրջան 2՝** Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Վրաստան, ԱՊՀ երկրներ բացի Հայաստանի Հանրապետությունից և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից,

8.3.3. **Տարածաշրջան 3՝** ամբողջ աշխարհ, բացի Հայաստանի Հանրապետությունից և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից:

8.4. Ապահովագրության Պայմանագրով կարող է սահմանափակվել Ապահովագրված անձի գտնվելու Ապահովագրության տարածքը՝ նշելով կոնկրետ երկիր կամ երկրների խումբ:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԴԱԴԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետը սահմանվում է Կողմերի համաձայնությամբ:

9.2. Ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով կարող է նախատեսվել Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի իր մշտական բնակության երկրից դուրս մեկնաձայն կամ բազմակի Ուղևորություն: Պայմանագրում/Վկայագրում նշվում է դրա սկիզբը և ավարտը:

9.3. Ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով կարող է նախատեսվել Ապահովագրության օրերի քանակ՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետում Ապահովագրված անձի բոլոր Ուղևորությունների համար: Ընդ որում, Ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով նախատեսված Ապահովագրության օրերի քանակի սահմաններում: Յուրաքանչյուր անգամ Ապահովագրության տարածք մուտք գործելիս Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրության օրերի քանակը ինքնաշխատ նվազում է Պայմանագրում/Վկայագրում նշված երկրում/երկրներում գտնվելու օրերի քանակով: Ապահովագրողի պատասխանատվությունն ավարտվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված օրերի քանակի կամ Ապահովագրական հատուցման սահմանաչափերի սպառման դեպքում:

9.4. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը ուժի մեջ է մտնում՝

ա) Ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի կանխիկ վճարման դեպքում վճարմանը հաջորդող օրվա ժամը 00:00-ին, բայց ոչ շուտ, քան Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության սկզբի օրվա 00:00-ից և ոչ շուտ քան, արտասահման մեկնելու դեպքում

Ապահովագրված անձի մշտական բնակության երկրի սահմանը անցնելը: Ընդ որում, վճարման օր է համարվում Ապահովագրավճարի ստացականի վրա նշված ամսաթիվը,

բ) Ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի բանկի հաշվարկային հաշվին փոխանցելու նպատակով Ապահովագրողի հաշվարկային հաշվից դուրս գրման օրվա հաջորդող օրվա ժամը 00:00-ին, բայց ոչ շուտ, քան, Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության սկզբի օրվա 00:00-ից և ոչ շուտ քան, արտասահման մեկնելու դեպքում Ապահովագրված անձի մշտական բնակության երկրի սահմանը անցնելը:

9.5. Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի գործողությունը դադարում է, և Ապահովագրված անձը կորցնում է ծառայությունների ստացման իրավունքը հետևյալ դեպքերում՝

9.5.1. Պայմանագրում/Վկայագրում սահմանված գործողության ժամկետը (Ապահովագրության օրերը) լրանալու օրվա տեղական ժամանակով ժամը 23:59-ին, բայց ոչ ուշ, քան Ապահովագրված անձի իր մշտական բնակության երկրի սահմանը հատելու պահը,

9.5.2. Ապահովագրողի կողմից իր պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու,

9.5.3. դատարանի կողմից ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի անվավեր ճանաչելու որոշում ընդունելու,

9.5.4. ՀՀ գործող օրենսդրության համաձայն Ապահովագրողի լուծարման,

9.5.5. Ապահովագրողի պահանջով՝ այդ մասին գրավոր դիմում ներկայացնելով Ապահովագրողին, եթե ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելուց հետո Ապահովագրական պատահարն ի հայտ գալու հավանականությունը չի վերացել և Ապահովագրական դիսկի գոյությունը չի դադարել Ապահովագրական պատահարից տարբերվող այլ հանգամանքների բերումով,

9.5.6. Ապահովագրված անձի մահվան դեպքում՝ մահվան օրվա ժամը 23:59-ին, բացառությամբ երբ Ապահովագրված անձի (անձանց) մահը ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով ճանաչվում է Ապահովագրական պատահար,

9.5.7. Ապահովագրողի և Ապահովագրողի համաձայնությամբ,

9.5.8. եթե ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելուց հետո Ապահովագրական պատահարն ի հայտ գալու հավանականությունը վերացել է և Ապահովագրական դիսկի գոյությունը դադարել է Ապահովագրական պատահարից տարբերվող այլ հանգամանքների բերումով, այդ թվում նաև՝ Ապահովագրված անձի համար անկանխատեսելի հանգամանքների հետևանքով արտասահման մեկնելու անհնարինության պատճառով և նշված հանգամանքները հաստատված են փաստաթղթորեն,

9.5.9. ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

9.6. Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի դադարման պահ է համարվում՝

9.6.1. Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի 9.5.2., 9.5.3. և 9.5.8. կետերով նախատեսված հիմքերով դադարելու դեպքում Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է նշված հիմքերը ի հայտ գալու պահից,

9.6.2. Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի 9.5.5. կետերով նախատեսված հիմքերով դադարելու դեպքում Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է Ապահովագրողի կողմից համապատասխան դիմումը ներկայացնելու պահից, եթե դիմումում ավելի ուշ ժամկետ նշված չէ:

9.7. Ապահովագրական պատահար չի համարվում իրադարձությունը, որը չնայած որ ունի Ապահովագրական պատահարի նախանշաններ, սակայն տեղի է ունեցել Պայմանագրի/Վկայագրի դադարելուց կամ սույն բաժնի համապատասխան պայմաններով լուծելուց հետո:

9.8. Ֆիզիկական անձ Ապահովագրողին իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը դրա կնքմանը

հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (Մտածելու ժամանակ): Այդ դեպքում ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է լուծված ֆիզիկական անձ Ապահովագրի կողմից ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մասին Ապահովագրողին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից: Ապահովագրից դիմումի հետ պետք է ներկայացնի ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը և Ապահովագրավճարի վճարման անդորրագրի բնօրինակը: Նշված փաստաթղթերի բացակայության դեպքում Ապահովագրի անձամբ դիմումում նշում է դրանց չներկայացման պատճառները: Նշված փաստաթղթերը չներկայացնելը հիմք չի հանդիսանում ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման մերժման համար:

9.8.1. Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.

ա) Պայմանագրի գործողության ժամկետը և (կամ) Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրության գործողության ժամկետը չի գերազանցում 1 (մեկ) ամիսը,
բ) կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձ Ապահովագրի դիմել է Ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:

9.8.2. Ֆիզիկական անձ Ապահովագրի կողմից Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվանից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (Մտածելու ժամանակ) Պայմանագրից/Վկայագրից հրաժարվելու դիմում ներկայացնելու դեպքում՝

- Ապահովագրավճարն ամբողջությամբ վերադարձվում է Ապահովագրին, եթե Ապահովագրից հրաժարվել է Պայմանագրից/Վկայագրից մինչև դրա գործողության ժամկետի սկիզբը,

- Ապահովագրավճարը վերադարձման ենթակա է մասնակի՝ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի չլրացած օրերի ժամկետին համամասնորեն, եթե Ապահովագրից հրաժարվել է ապահովագրության Պայմանագրից/Վկայագրից ապահովագրության գործողության ժամկետի սկզբից հետո:

9.8.3. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է դադարած Ապահովագրի գրավոր դիմումը ստանալու ամսաթվի կամ Ապահովագրողի և Ապահովագրի համաձայնությամբ այլ ամսաթվի ժամը 00:00-ից, բայց ոչ ուշ, քան սույն կետի առաջին պարբերությամբ նշված ժամկետից:

9.8.4. Ապահովագրավճարի (Ապահովագրավճարի մի մասի) վերադարձը իրականացվում է Ապահովագրի Պայմանագրից/Վկայագրից հրաժարվելու դիմումը ներկայացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

9.9. Ապահովագրավճարի վերադարձը սույն բաժնով նախատեսված այլ դեպքերում իրականացվում է հետևյալ կերպ՝

9.9.1. Սույն Պայմանների **9.5.1.**, **9.5.2.** և **9.5.5.** կետերով սահմանված հանգամանքներով դադարելու դեպքում Ապահովագրավճարը ետ չի վերադարձվում,

9.9.2. Սույն Պայմանների **9.5.7.**, **9.5.8.** և **9.5.9.** հիմքով Պայմանագրի/Վկայագրի դադարեցման դեպքում, վերադարձման ենթակա Ապահովագրավճարի մի մասը հաշվարկվում է հետևյալ բանաձևի համաձայն՝

$$ՎԱ=(Ա-Ա*ԳԾ)*ԱԶՕ/ԱՕ$$

- ՎԱ՝ վերադարձման ենթակա Ապահովագրավճար
- Ա՝ վճարված Ապահովագրավճար,
- ԳԾ՝ Ապահովագրողի գործառնական ծախսերը (45%),
- ԱԶՕ՝ Ապահովագրության չլրացած օրերը (հաշվարկվում են Ապահովագրության օրերից հանելով Պայմանագրի գործողության սկզբի ամսաթվից մինչև Ապահովագրի կողմից գրավոր դիմումը ներկայացնելու ամսաթիվը անցած օրերը),
- ԱՕ՝ Ապահովագրության օրերը:

9.10. Եթե Ուղևորության չկայացման հետևանքով Ապահովագրողի մոտ առաջացել է Ապահովագրական հատուցում վճարելու պարտականություն, Ապահովագրավճարը ետ չի վերադարձվում:

9.11. Սույն Պայմանների այլ կետերով սահմանված դեպքերում Ապահովագրավճարը ետ չի վերադարձվում, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

9.12. Եթե Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու արդյունքում սույն Պայմաններով նախատեսված է Ապահովագրավճարի վերադարձ, ապա այն իրականացվում է Ապահովագրից գրավոր դիմումը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

9.13. Ապահովագրողն իրավունք ունի պահանջել անվավեր ճանաչել ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը, եթե դրա կնքումից հետո պարզվի, որ Ապահովագիրը Ապահովագրողին հայտնել է կեղծ, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ Ապահովագրված անձի (անձանց) առողջության և ուղևորության նպատակի վերաբերյալ:

10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1. Ապահովագիրն (Ապահովագրված անձը) իրավունք ունի՝

1.1.1. սույն Պայմանների և ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի պայմաններին համաձայն՝ ստանալ Ապահովագրական հատուցումներ, բժշկական և այլ ծառայություններ,

1.1.2. ստանալ պարզաբանումներ սույն Պայմանների և Պայմանագրի/Վկայագրի առանձին կետերի մասին:

10.2. Ապահովագիրը / Ապահովագրված անձը պարտավոր է՝

10.2.1. Պայմանագրով/Վկայագրով սահմանված Ապահովագրավճարը վճարել ժամանակին՝ Պայմանագրում/Վկայագրում նշված չափով և կարգով,

10.2.2. ծանոթանալ սույն Պայմանների հետ և տեղեկացնել Ապահովագրված անձանց սույն Պայմանների և Պայմանագրի/Վկայագրի դրույթներին,

10.2.3. հայտնել Ապահովագրողին Ապահովագրված անձի (անձանց) վերաբերյալ Պայմանագիրը կնքելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները,

10.2.4. Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության ի հայտ գալու դեպքում, մինչև Կլինիկա դիմելը, անհապաղ/ողջամիտ ժամկետում դիմել ապահովագրության Սպասարկող ընկերության Պայմանագրում/Վկայագրում նշված հեռախոսահամար(ներ)ով,

10.2.5. համաձայնեցնել Սպասարկող ընկերության հետ իր գործողությունները, հետևել Սպասարկող ընկերության աշխատակցի հրահանգներին,

10.2.6. մշտական բնակության երկրից դուրս գալու դեպքում իր մոտ ունենալ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը, այդ թվում նաև Սպասարկող ընկերություն դիմելու, բժշկի դիմելու կամ Կլինիկա այցելելու դեպքում,

10.2.7. ձեռնարկել ողջամիտ և մատչելի միջոցներ՝ հնարավոր վնասները նվազեցնելու համար: Ապահովագիրը/Ապահովագրված անձը նման միջոցներ կիրառելիս պետք է հետևի Ապահովագրողի/Սպասարկող ընկերության ցուցումներին, եթե այդպիսիք եղել են,

10.2.8. չընդունել որևէ վճարման պատասխանատվություն, բացառությամբ Սպասարկող ընկերության հետ համաձայնեցվածների,

10.2.9. ստանալ և պահպանել սույն Պայմաններով նախատեսված և Ապահովագրական հատուցման որոշումը իրականացնելու համար Ապահովագրական պատահարի հետ կապված բժշկական և վճարային փաստաթղթերը, ժամանակին դրանք հանձնել Ապահովագրողին՝ կցելով ապահովագրական հատուցում ստանալու դիմումին,

10.2.10. Ապահովագրողի պահանջով ներկայացնել Ապահովագրական պատահարի հետ կապված այլ լրացուցիչ փաստաթղթեր,

10.2.11. տեղեկացնել Ապահովագրողին իր օգտին կնքված մշտական բնակության երկրից դուրս գտնվելու ընթացքում բժշկական օգնություն կամ այլ ծախսերի հատուցում նախատեսող այլ ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի մասին,

10.2.12. կատարել վճարում անմիջապես բժշկական հաստատությանը՝ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ծախսերի հատուցման սահմանաչափը գերազանցող գումարի չափով,

10.2.13. կատարել համապատասխան ապահովագրական ծածկույթով նախատեսված պարտականությունները,

10.2.14. Ապահովագրողի պահանջով անցնել բժշկական գնություն փաստացի վիճակի գնահատման համար,

10.2.15. ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր կնքելիս հայտնել Ապահովագրողին իրեն հայտնի բոլոր այն հանգամանքների մասին, որոնք կարող են էական նշանակություն ունենալ Ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականության որոշման համար, եթե այդ հանգամանքները հայտնի չեն, սակայն պետք է հայտնի լինեն Ապահովագրողին,

10.2.16. Պայմանագիր/Վկայագրի կնքումից հետո և գործողության ընթացքում անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին՝ Պայմանագիրը կնքելիս հայտնած հանգամանքների իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա: Բոլոր դեպքերում էական են համարվում Պայմանագրում/Վկայագրում փոփոխություններ ենթադրող հանգամանքները:

10.3. Ապահովագրողն իրավունք ունի՝

10.3.1. պահանջել Ապահովագրից տրամադրել ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքման համար պահանջվող հավաստի տեղեկատվություն,

10.3.2. փոխել Սպասարկող ընկերությանը կամ համագործակցել նոր Սպասարկող ընկերության հետ,

10.3.3. ստուգել Ապահովագրի (Ապահովագրված անձի) կողմից տրամադրված տվյալների և տեղեկատվության իսկությունը,

10.3.4. անհրաժեշտության դեպքում, Ապահովագրական պատահար ի հայտ գալուց հետո անցկացնել Ապահովագրված անձի բժշկական գնում Ապահովագրողի կողմից որոշված բժշկի կողմից,

10.3.5. ինքնուրույն և/կամ Սպասարկող ընկերության միջոցով պարզել Ապահովագրական պատահարի պատճառները և հանգամանքները, ուսումնասիրել, հարցումներ կատարել Ապահովագրական պատահարի վերաբերյալ պատկան մարմիններից, այդ ընթացքում հետաձգելով Ապահովագրական հատուցման իրականացումը,

10.3.6. չհատուցել ամբողջությամբ կամ մասնակի այն ծախսերը, որոնք չեն կազմակերպվել Սպասարկող ընկերության միջոցով և/կամ նախապես չեն համաձայնեցվել նրա հետ,

10.3.7. նվազեցնել Ապահովագրական հատուցման գումարը կամ պահանջել Ապահովագրից (Ապահովագրված անձից) մասնակցել հատուցման ծախսերին, եթե Հանկարծակի հիվանդության կամ վնասվածքի ընթացքը բարդանում է Քրոնիկ հիվանդության պատճառով,

10.3.8. անմիջապես միակողմանի դադարեցնել Պայմանագիրը /Վկայագիրը կամ պահանջել Ապահովագրավճարի լրավճար՝ մինչև Պայմանագիրը/Վկայագիրը կնքելը նախապես հայտնած տեղեկությունների փոփոխության մասին տեղեկանալուց հետո,

10.3.9. այն դեպքում, երբ իրավասու մարմինները տնօրինում են այնպիսի նյութերի կամ տեղեկատվության, որը հիմք է տալիս Ապահովագրողին ճանաչել դեպքը ոչ ապահովագրական, հետաձգել Ապահովագրական հատուցումը մինչև բոլոր հանգամանքների բացահայտումը,

10.3.10. հետաձգել Ապահովագրական հատուցման վճարման մասին որոշման ընդունումը, եթե՝

- նշանակվել է Ապահովագրական պատահարի առաջացման պատճառների, հանգամանքների և վնասի չափի անկախ փորձաքննություն,

10.3.11. ընթանում է դատական գործ, որի արդյունքը կարող է ազդել վնասի չափի և/կամ տեղի ունեցած իրադարձության հանգամանքների վրա՝ մինչև տվյալ գործով վերջնական դատական ակտի կայացումը:

10.3.12. Ապահովագրված անձի կողմից հատուցման պահանջ ներկայացնելու դեպքում՝ պահանջել Ապահովագրված անձից ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված պարտականությունների կատարում, որոնք կրում է Ապահովադիրը, բայց չի կատարվել վերջինիս կողմից,

10.3.13. նվազեցնել Ապահովագրված անձին հատուցվող ծախսերի գումարից չօգտագործված ճանապարհորդական փաստաթղթերի (տոմսի) արժեքի չափով, որոնք չեն տրամադրվել Ապահովագրողին **16.2.4.** կետով նախատեսված իրադարձությունը ի հայտ գալու դեպքում,

10.3.14. պահանջել անվավեր ճանաչել ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը, եթե Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո պարզվի, որ Ապահովադիրը Ապահովագրողին հայտնել է ակնհայտ սուտ, իրականությանը չհամապատասխանող, կեղծ տեղեկություններ իրեն հայտնի հանգամանքների վերաբերյալ, որոնք ունեին էական նշանակություն Ապահովագրական պատահարը ի հայտ գալու հավանականության որոշման և դրա ի հայտ գալու դեպքում հնարավոր վնասների չափի համար: Էական են համարվում ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով նշված հանգամանքները:

10.3.15. մերժել Ապահովագրական հատուցումը, եթե Ապահովագրված անձի կամ իր ներկայացուցչի կողմից ներկայացվել են կեղծ, իրականությանը չհամապատասխանող կամ ապակողմնորոշիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր,

10.3.16. չիրականացնել Ապահովագրական հատուցում, եթե Ապահովագրված անձը կամ նրա ներկայացուցիչը չեն ներկայացրել Ապահովագրական հատուցման որոշման ընդունման համար պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,

10.3.17. Ապահովագրական ռիսկը մեծացնելու հանգամանքների մասին տեղեկանալուց հետո փոփոխել Պայմանագրի/Վկայագրի պայմանները և/ կամ պահանջել Ապահովադրից լրացուցիչ վճար՝ ռիսկը մեծանալուն համաչափ,

10.3.18. պահանջել լուծել ապահովագրության ՀՀ գործող օրենսդրությանը համաձայն, եթե Ապահովադիրը, հրաժարվում է Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխությունից կամ լրացուցիչ Ապահովագրավճար վճարելուց,

10.3.19. պահանջել լուծել ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը և մերժել վնասների հատուցումը, որոնք առաջացել են Պայմանագրի/Վկայագրի լուծման հետ կապված, եթե Ապահովադրի կողմից չեն կատարվել սույն Պայմանների 10.2.4. կետով սահմանված պարտականությունները:

10.4. Ապահովագրողը պարտավոր է՝

10.4.1. ծանոթացնել Ապահովադրին ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի պայմաններին,

10.4.2. վերահսկել Ապահովագրված անձին տրամադրվող ծառայությունների ծավալը և ծառայությունների մատուցման ժամկետները՝ սույն Պայմաններին համաձայն,

10.4.3. Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում իրականացնել Ապահովագրական հատուցում՝ սույն Պայմանների համաձայն:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱԿԱՐ Ի ՀԱՅՏ ԳԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Սպասարկող ընկերությունը աջակցում է Ապահովագրված անձի բժշկական և այլ օգնության կազմակերպմանը, տեղեկացնում է նրան այդ օգնության տրամադրման կարգի մասին և խորհուրդ է տալիս հետագա գործողությունների վերաբերյալ:

11.2. Սույն Պայմաններով և ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով նախատեսված Անհետաձգելի բժշկական օգնության և այլ ծառայությունների ստացման համար Ապահովագրված անձը (նրա ներկայացուցիչը) պարտավոր է՝

11.2.1. դիմել Սպասարկող ընկերությանը ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված շուրջօրյա հեռախոսահամարով և հայտնել հետևյալ տեղեկատվությունը՝

- Ապահովագրված անձի անուն, ազգանունը
- Ապահովագրողի անվանումը («ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ)
- ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի համարը,
- Ապահովագրված անձի ծննդյան ամսաթիվը,
- նկարագրել առաջացած խնդիրը, հանգամանքները, գանգատները, պահանջվող բժշկական կամ այլ օգնության բնույթը
- հայտնել Ապահովագրված անձի գտնվելու վայրը՝ հասցե, անվանում (հյուրանոցի, Կլինիկայի

- հեռախոսահամար, այդ թվում բջջային,

11.2.2. խստորեն հետևել Սպասարկող ընկերության աշխատակցի ցուցումներին՝ համաձայնեցնելով իր բոլոր գործողությունները վերջինիս հետ,

11.2.3. Սպասարկող ընկերության կողմից կազմակերպված բժշկական օգնություն ստանալու դեպքում՝ ներկայացնել Կլինիկային ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը և անձը հաստատող փաստաթղթերը,

11.2.4. չվերցնել իր վրա վճարման պատասխանատվություն՝ առանց Սպասարկող ընկերության հետ համաձայնեցնելու,

11.2.5. վճարել Կլինիկային ոչ պայմանական Չհատուցվող գումարի չափով, եթե այդպիսին նախատեսված է ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում,

11.2.6. հետևել բուժող բժշկի ցուցումներին և Կլինիկայում հաստատված կարգին, որտեղ Ապահովագրված անձին ցուցաբերում են բժշկական օգնություն,

11.2.7. տալ իր համաձայնությունը մշտական բնակության երկիր բժշկական հայրենադարձման համար, եթե Սպասարկման ընկերության բժշկի կարծիքով՝ Կլինիկայի բժշկական փաստաթղթերի հիման վրա այն հնարավոր է: Ապահովագրված անձի համաձայնություն տալուց հրաժարվելը զրկում է Ապահովագրության տարածքում Ապահովագրված անձին բուժման և Կլինիկայում կացության համար Ապահովագրողի կողմից հետագա ծախսերը հատուցելուց:

11.2.8. այն դեպքերում, երբ հնարավոր չէ կազմակերպել ծառայությունները առանց տեղում վճարում կատարելու, և/կամ որոնք չեն կարող իրականացվել Սպասարկող ընկերության հետ համագործակցող Կլինիկաներում, և/կամ Սպասարկող ընկերությունը տվյալ տարածքում չի կարող կազմակերպել անհրաժեշտ բժշկական օգնություն, Ապահովագրված անձը ծախսերը կատարում է ինքնուրույն՝ նախապես համաձայնեցնելով Սպասարկող ընկերության հետ: Ուղևորությունից վերադառնալուց հետո Ապահովագրված անձը դիմում է Ապահովագրողին սույն Պայմաններով նախատեսված կարգով՝ Ապահովագրական հատուցում ստանալու համար:

11.3. Ապահովագրված անձը (նրա ներկայացուցիչը) Սպասարկող ընկերություն դիմելու անհնարինության դեպքում, պետք է անի դա առաջին իսկ հնարավորության դեպքում:

11.4. Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում տրամադրված բժշկական օգնության որակի համար:

11.5. Ապահովագրված անձի ինքնուրույն Կլինիկա դիմելու դեպքում (եթե այն չի կազմակերպվել և/կամ նախապես չի համաձայնեցվել Սպասարկող ընկերության հետ), Ապահովագրողը իրեն իրավունք է վերապահում ընդունել որոշում տվյալ դեպքի կարգավորման մասնակցության չափի վերաբերյալ: Ապահովագրված անձին կարող է առաջարկվել ինքնուրույն վճարել ծախսերը, և մշտական բնակության երկիր վերադառնալուց հետո Ապահովագրողին ներկայացնել սույն Պայմանագրով նախատեսված փաստաթղթերը՝ կատարված ծախսերի փոխհատուցման հարցը ուսումնասիրելու համար:

12. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐ

12.1. Բոլոր դեպքերում Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում և Ապահովագրական պատահար չեն համարվում իրադարձությունները, որոնք հետևանք են՝

12.1.1. Ապահովադրի, Ապահովագրված անձի, նրանց Մերձավոր հարազատների կանխամտածված գործողությանը/անգործությանը՝ ուղղված Ապահովագրական պատահարի առաջացմանը,

12.1.2. Ապահովագրված անձի, նրա Մերձավոր հարազատների ինքնասպանության, ինքնասպանության փորձի, կանխամտածված անդամախեղության,

12.1.3. Ապահովագրական պատահարի հետ կապված Ապահովադրի կամ Ապահովագրված անձի կանխամտածված հանցագործություն կամ անօրինական գործողություն կատարելու,

12.1.4. միջուկային պայթյունի, ճառագայթային կամ ռադիոակտիվ վարակման, զանգվածային ոչնչացման զենքերի օգտագործման ազդեցության, տարերային աղետների, համաճարակների,

12.1.5. ռազմական գործողությունների, զորաշարժերի, քաղաքացիական պատերազմի, հասարակության կողմից տարբեր ընդվզումների, գործադուլների, ապստամբությունների, առգրավման, բռնագրավման, ձերբակալության՝ Ապահովագրված անձի մասնակցությամբ կամ առանց դրա,

12.1.6. ապահովագրված գույքի բռնագրավման, առգրավման, ազգայնացման կամ ոչնչացումը պետական մարմինների կարգադրությամբ, և այլ համանման քաղաքական բնույթի քայլերի՝ ձեռնարկված զինված և քաղաքական ուժերի հրամանով,

12.1.7. ահաբեկչական գործողության և/կամ ահաբեկչության,

12.1.8. Ապահովագրված անձի կողմից վարորդական իրավունք չունենալու կամ առանց համապատասխան վարորդական իրավունքի կարգի տրանսպորտային միջոց վարելու,

12.1.9. Ապահովագրված անձի կամ նրա Մերձավոր հարազատների ակտիվ, թմրանյութի, տոքսիկ կամ այլ հոգեմետ դեղերի ազդեցության տակ գտնվելու, ոչ սթափ վիճակում որևէ տրանսպորտային միջոց վարելու

12.1.10. Ապահովագրված անձի, նրա Մերձավոր հարազատների հակաօրինական գործողությունների կատարման,

12.1.11. Ապահովագրված անձի ցանկացած երկրում զինված ուժերում ծառայելու,

12.1.12. թռչող սարքերով թռիչքի դեպքում, այդ թվում առանց շարժիչի և/կամ գերթեթև սավառնակներով, օդապարհիկով, այդ թվում նաև դրանք կառավարելու դեպքում, բացառությամբ որպես ուղևոր քաղաքացիական ավիացիայի ինքնաթիռով թռիչքի դեպքում, որը ղեկավարվում է պրոֆեսիոնալ օդաչուի կողմից:

12.2. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Ապահովագրողի կողմից որպես Ապահովագրական պատահար չեն դիտվում և չեն հատուցվում հետևյալ դեպքերը՝

12.2.1. Ապահովագրված անձի մասնագիտական գործունեությամբ և/կամ բարձր վտանգավորության ֆիզիկական աշխատանքով զբաղվելու հետ (հանքագործ, շինարար), այդ թվում նաև, եթե դա եղել է Ապահովագրված անձի Ուղևորության նպատակը,

12.2.2. վտանգավոր տեսակի ակտիվ հանգստով, էքստրեմալ և սիրողական սպորտով զբաղվելու (դահուկային սպորտ, սնոուբորդինգ, սքեյթբորդինգ, սաֆարի, դայվինգ, ռաֆտինգ, ձիասպորտ, քարանձավագնացություն, լեռնագնացություն, թռչող սարքերով թռչելը, պարաշյուտիզմ, ռոուփ-ջամփինգ, պարկուր, սերֆինգ, մաունթբայք, ակտիվ հանգստի վտանգավոր այլ տեսակները), պրոֆեսիոնալ սպորտով (մարզանքների և մրցումների ժամանակ),

12.2.3. եթե Պայմանագրով/Վկայագրով նախատեսված իրադարձությունը տեղի է ունեցել տարածքում, որը նշված չէ ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում որպես Գործողության տարածք,

12.2.4. Պայմանագրով և սույն Պայմաններով նախատեսված Ապահովադրի/Ապահովագրված անձի պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու:

12.3. սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագիրը/Վկայագիրը չի տարածվում այն վնասների վրա, որոնք առաջացել են հյուպատոսական ծառայությունների, տրանսպորտային ընկերությունների, Փոխադրողի, Տուրօպերատորի, Տուրիստական գործակալության, անմիջապես Ապահովագրված անձի և այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից կատարված սխալների և բացթողումների արդյունքում, և որոնք առնչություն են ունեցել Ուղևորության նախապատրաստման, կազմակերպման և անցկացման մեջ: Սույն կետը չի տարածվում սույն Պայմանների ԲԱԺԻՆ 2-ի (ԲԺՇԿԱԿԱՆ, ԲԺՇԿԱ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ) ռիսկերի վրա:

12.4. Բոլոր դեպքերում, Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում Ապահովագրված անձի համար Ապահովագրության տարածք մուտք գործելուց հետո կնքված Պայմանագրի/Վկայագրի գծով:

12.5. Սույն Պայմանների համաձայն Ապահովագրողը մերժում է այն ծախսերի փոխհատուցումը, որոնց համար պահանջվող փաստաթղթերը Ապահովագրողին ներկայացվել են տվյալ Ապահովագրական պատահարի համապատասխան Բաժնով (Բաժիններով) սահմանված ժամկետից ուշ:

12.6. Սույն Պայմանների համաձայն կնքված Պայմանագրով/Վկայագրով հատուցման ենթակա չէ բարոյական վնասը և բաց թողնված օգուտը:

13. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԻՑ /ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՅԻԱ)

13.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին (Ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ վերջինիս կողմից հատուցված գումարի մասով:

13.2. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (պահովագրված անձի, շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

13.3. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

13.4. Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը, շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ

պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովագրի (Ապահովագրված անձի, շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է Ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:

14. ԳՐԱՎՈՐ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

14.1. Բոլոր գրավոր ծանուցումները և լրացուցիչ փաստաթղթերն ուղարկվում են Վկայագրում նշված Ապահովագրի և/կամ Ապահովագրված անձի էլեկտրոնային կամ գործունեության վայրի/բնակության հասցեով:

14.2. Պայմանագրի գործողության ընթացքում Վկայագրում նշված էլեկտրոնային կամ գործունեության վայրի/բնակության հասցեի փոփոխության դեպքում Ապահովագրիչը և/կամ Ապահովագրված անձը տեղեկացնում է այդ մասին Ապահովագրողին և ներկայացնում նոր հասցե, որով ցանկանում է ստանալ Ապահովագրողի կողմից ուղարկվող թղթային կամ էլեկտրոնային ծանուցումները:

14.3. Եթե Ապահովագրիչը և/կամ Ապահովագրված անձը չի տեղեկացնում Ապահովագրողին՝ իր հասցեի փոփոխության վերաբերյալ, ապա այդ հասցեով Ապահովագրողի կողմից ուղարկված ծանուցումները համարվում են պատշաճ կարգով ուղարկված:

15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

15.1. Սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրերից բխող վեճերը Կողմերը կձգտեն լուծել բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 2

16. ԲԺՇԿԱԿԱՆ, ԲԺՇԿԱ-ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

16.1. Ապահովագրական պատահար է համարվում Ուղևորության ժամանակ ի հայտ եկած Հանկարծակի հիվանդությունը և տեղի ունեցած Դժբախտ պատահարը, որոնք պահանջում են Հրատապ և/կամ Անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացած մահը, պայմանով, որ նշված իրադարձությունները տեղի են ունեցել Ապահովագրված անձի Ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված տարածքում և գործողության ժամկետում:

16.1.1. Մահը համարվում է Ապահովագրական պատահար, եթե այն ի հայտ է եկել Հանկարծակի հիվանդության կամ Դժբախտ պատահարի հետևանքով, որոնք սույն Պայմանների համաձայն համարվում են Ապահովագրական պատահար:

16.2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

16.2.1. Շտապ և Անհետաձգելի բժշկական օգնություն՝

ա) Ամբուլատոր (արտահիվանդանոցային) բժշկական օգնություն՝ բժշկական խորհրդատվություններ, բժշկի կանչ (եթե Ապահովագրված անձի առողջական վիճակը թույլ չի տալիս ինքնուրույն այցելել բժշկին), անհրաժեշտ ախտորոշիչ հետազոտություններ, ներարկումներ, անզգայացում, վերքերի առաջնային վիրաբուժական մշակում, վիրակապություններ, բժշկական այլ միջամտություններ: Յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի շրջանակներում սույն կետով նախատեսված ծախսերը հատուցվում են մինչև 300 ՊՄ,

բ) Ստացիոնար (հիվանդանոցային) բժշկական օգնություն՝ Ապահովագրված անձի հրատապ հոսպիտալացում, ստանդարտ հիվանդասենյակ, վերակենդանացման միջոցառումներ, հրատապ

վիրահատություններ (այն դեպքերում, երբ վիրահատությունը չի կարող հետաձգվել մինչև Ապահովագրված անձի հնարավոր ամենավաղ վերադարձի ամսաթիվը):

Յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի շրջանակներում սույն կետով նախատեսված ծախսերը հատուցվում են մինչև 1000 ՊՄ և հոսպիտալացում՝ առավելագույնը 5 օր,

գ) Հրատապ վիրահատություններ վնասվածքների դեպքում (այն դեպքերում, երբ վիրահատությունը չի կարող հետաձգվել մինչև ապահովագրված անձի հնարավոր ամենավաղ վերադարձի ամսաթիվը):

Յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի շրջանակներում սույն կետով նախատեսված ծախսերը հատուցվում են մինչև 3000 ՊՄ,

դ) Դեղամիջոցներ, բժշկական պարագաներ (ներարկիչներ, կաթիլային ներարկումների համակարգեր)՝ հրատապ բժշկական օգնության համար անհրաժեշտ քանակով, վիրակապական պարագաներ, անշարժացնող միջոցներ, հենակների կամ հաշմանդամային անվասայլակի վարձակալում՝ մինչև 100 ՊՄ,

ե) Շտապ ատամնաբուժական օգնություն՝ սուր ատամնացավի առաջացման դեպքում (ատամի հեռացում, թարախակույտի բացում, անզգայացում)՝ մինչև 200 ՊՄ,

զ) Անհետաձգելի բժշկական օգնություն Քրոնիկ հիվանդության սրացման և/կամ բարդացման դեպքում՝ հատուցվում են Ապահովագրված անձի կյանքին սպառնացող վտանգի վերացման անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը: Ապահովագրված անձի կյանքին վտանգ սպառնալու դեպքում Անհետաձգելի բժշկական օգնության առավելագույն սահմանաչափը կազմում է 500 ՊՄ,

16.2.2. Բժշկական էվակուացում՝ Ապահովագրված անձի տեղափոխումը՝ ժամանակավոր կացության երկրում գտնվող և բժշկական ծառայությունների ծավալով համապատասխանող ամենամոտ Կլինիկաներից մեկը, այդ թվում նաև տաքսի ծառայությունների ծախսերը դեպի Կլինիկա և հակառակը, և դեպի օդանավակայան (կայարան),

16.2.3. Բժշկական հայրենադարձում՝ բուժումը շարունակելու նպատակով Ապահովագրված անձի տեղափոխումը ժամանակավոր կացության երկրի տարածքից իր մշտական բնակության երկրին միջազգային հաղորդակցում ունեցող ամենամոտ օդանավակայան, եթե տեղափոխման համար չկան բժշկական հակացուցումներ: Սույն կետով նախատեսված տեղափոխումը իրականացվում է բացառապես Սպասարկող ընկերության միջոցով,

16.2.4. Վաղաժամկետ վերադարձ (ընդհատում)՝ Ապահովագրված անձի վաղաժամկետ վերադարձ իր մշտական բնակության երկիր՝ Մերձավոր հարազատներից որևէ մեկի առողջության վատթարացման կամ Դժբախտ պատահարի հետևանքով՝ Հրատապ հոսպիտալացման կամ մահվան դեպքում: Սույն կետով Ապահովագրողը հատուցում է Ապահովագրված անձի միակողմանի էկոնոմ տոմսի փոխարինման ծախսերը՝ Ապահովագրված անձի չօգտագործված հետադարձի տոմսը Ապահովագրողին նեկայացնելու պայմանով:

16.2.5. Հետաձգված հայրենադարձում՝ եթե Ապահովագրված անձը Ապահովագրական պատահարի հետևանքով ժամանակին չի վերադարձել իր մշտական բնակության երկիրը, Ապահովագրողը հատուցում է այն ծախսը, որն առաջացել է Ապահովագրված անձի վերադարձի չօգտագործված տոմսը նորով փոխարինելու, իսկ անհնարինության դեպքում՝ վերադարձի նոր տոմսը ձեռք բերելու արդյունքում,

16.2.6. Հետմահու հայրենադարձում՝ միջազգային տեղափոխությանը համապատասխանող կարգով Ապահովագրված անձի մարմնի հայրենադարձում՝ իր մշտական բնակության երկրին միջազգային հաղորդակցում ունեցող ամենամոտ օդանավակայան, եթե Ապահովագրված անձի մահը Ապահովագրական պատահարի հետևանք է: Հետմահու հայրենադարձման հետ կապված բոլոր գործողություններն իրականացվում են բացառապես Սպասարկող ընկերության միջոցով,

16.2.7. Ապասարկող ընկերության հետ կապ հաստատելու ծախսեր՝ Պայմանագրի գործողության ընթացքում մինչև 100 ՊՄ,

16.2.8. Երրորդ անձի այցը արտակարգ իրավիճակի դեպքում՝ եթե Ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձի հիվանդանոցում գտնվելու ժամանակը գերազանցում է 7 (յոթ) օր և առկա է երրորդ անձի կողմից խնամքի անհրաժեշտությունը, ապա Ապահովագրողը հատուցում է Ապահովագրված անձի Հարազատներից մեկի երկկողմանի ուղղությամբ էկոնոմ կարգի տոմսերի ծախսը: Հարազատի արտերկրում գտնվելու ծախսերն Ապահովագրողը չի հոգում,

16.2.9. Անչափահաս երեխաների հայրենադարձում՝ եթե Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած Ապահովագրական պատահարի հետևանքով իր հետ ճանապարհորդող անչափահաս երեխաները մնացել են առանց խնամակալի, Ապահովագրողը ապահովում է նրանց մշտական բնակության երկիր վաղաժամկետ վերադարձը էկոնոմ կարգի տոմսով, ներառյալ Մերձավոր հարազատներից մեկի ուղեկցման համար էկոնոմ կարգի տոմսի ծախսը,

16.2.10. Հիվանդանոցային բուժման դեպքում օրական նպաստ՝ եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, հիվանդանոցային բուժում պահանջող դեպքերում Ապահովագրված անձին վճարվելու է օրական նպաստ՝ սկսած հիվանդանոցում գտնվելու 3-րդ օրվանից, յուրաքանչյուր օրվա համար 50 ՊՄ-ի չափով: Սույն կետով նախատեսված առավելագույն հատուցումը կազմում է 1,500 ՊՄ:

16.2.11. Եթե Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետն ավարտվել է, սակայն Ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած Ապահովագրված անձի բուժումը շարունակվում է և Ապահովագրված անձի մշտական բնակության երկիր վերադարձը հնարավոր չէ հոսպիտալացման պատճառով՝ Ապահովագրողը կրում է բժշկական ծառայությունների վճարման ծախսերը՝ մինչև Ապահովագրված անձի Անհետաձգելի բժշկական վիճակից դուրս գալը:

16.3. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

16.3.1. Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, Ապահովագրական պատահար չի համարվում և Ապահովագրողը չի փոխհատուցում Ապահովագրված անձին մատուցված բժշկական և այլ ծառայությունների ծախսերը՝ կապված հետևյալ հիվանդությունների և/կամ դրանց սրացումների և/կամ դրանց բարդացումների (այդ թվում բուժման ընթացքում առաջացած) և/կամ որոնց հետևել է մահը՝

ա) հիվանդություններ, վիճակներ և վնասվածքներ, որոնք գոյություն են ունեցել և/կամ պահանջել են բուժում և/կամ ախտորոշվել են մինչև Պայմանագրի/Վկայագրի գործողության սկիզբի պահը, և/կամ մինչև Ապահովագրված անձի Ապահովագրության տարածք ժամանելը, եթե նույնիսկ ապահովագրված անձը չգիտեր նշված հիվանդությունների առկայության մասին,

բ) Քրոնիկ հիվանդությունների բուժումը, եթե բժշկական օգնության ցուցաբերման անհրաժեշտությունը կապված չէ Ապահովագրված անձի կյանքին վտանգ սպառնալու հետ,

գ) բնածին և զարգացման արատները, ժառանգական հիվանդությունները, անոթների անևրիզմալները և մաֆորմացիաները,

դ) բարորակ և չարորակ նորագոյացությունները, արյունաբանական հիվանդությունները,

ե) ատամնաբուժական հիվանդությունները, բացառությամբ սույն Պայմանագրով նախատեսված անհետաձգելի ատամնաբուժական օգնության,

զ) արևային այրվածքները և արևահարությունները, մաշկային հիվանդությունները, ծմբային խցանները,

է) հղիության վարումը և պահպանումը, ծննդօգնությունը, հղիության կամավոր դադարեցումը, բացառությամբ հանկարծակի բարդացումների, որոնք վտանգ են սպառնում Ապահովագրված

անձի կյանքին, կամ փաստաթղթորեն հաստատված Դժբախտ պատահարի (բոլոր դեպքերում հղիության ժամկետը չպետք է գերազանցի 8 շաբաթը), եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

ը) բուժումը Ապահովագրության գործողության տարածքի սահմաններից և/կամ ժամանակավոր կացության երկրի տարածքից դուրս գտնվող Կլինիկաներում,

թ) հոգեկան հիվանդությունները և խանգարումները, պսիխոզները, ներոզները, սահմանային վիճակները, թմրամոլությունը, ալկոհոլիզմը, այդ թվում նաև վնասվածքները և սոմատիկ հիվանդությունները, որոնք առաջացել են նշված հիվանդությունների և վիճակների արդյունքում,

ժ) հատկապես վտանգավոր վարակները՝ խոլերա, բժավոր տիֆ, ժանտախտ, վիրուսային հեմոռագիկ տենդը, և հիվանդություններ, որոնք կարող էին կանխարգելվել ժամանակին պատվաստումների միջոցով, և/կամ հանդիսանում են Ապահովագրված անձի կողմից համաճարակային կանխարգելիչ միջոցառումների խախտման արդյունք,

ի) հենաշարժիչ ապարատի դիստրոֆիկ և այլ դեգեներատիվ փոփոխությունները (օստեոխոնդրոզ, օստեոարթրոզ, օստեոպորոզ, պաթոլոգիկ կոտրվածքներ և այլն),

լ) առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, ուրոգենիտալ ինֆեկցիաները, սնկային ախտահարումները, ՄԻԱՎ/ՁԻԱՀ, վիրուսային հեպատիտներ B, C և D, տուբերկուլյոզը,

խ) որոնողա-փրկարարական աշխատանքները՝ Ապահովագրված անձին սարերում, ծովում, անապատում և այլ հեռավոր վայրերում գտնելու նպատակով:

16.3.2. Ապահովագրողը չի վճարում և չի փոխհատուցում ծախսերը, որոնք կապված են՝

ա) էսթետիկ, կոսմետիկ և/կամ պլաստիկ վիրահատությունների և միջամտությունների, օրգանների և համակարգերի վերականգնողական և պլաստիկ վիրահատությունների (այդ թվում՝ նյարդային, հենաշարժական), կապանների պլաստիկայի հետ,

բ) ցանկացած տեսակի պրոթեզավորման, իմպլանտավորման, օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման հետ,

գ) անգիոգրաֆիկ հետազոտությունների, ներանոթային միջամտությունների, սիրտ-անոթային համակարգի վիրահատությունների հետ,

դ) բարձր տեխնոլոգիաների բժշկական օգնության, քիչ ինվազիվ, բուժման նորարարական մեթոդների, լազերային վիրաբուժության հետ,

ե) համակարգչային շերտագրման, մագնիսառեզոնանսային շերտագրման, այլ թանկարժեք և դժվարամատչելի հետազոտությունների հետ, որոնք նախապես չեն համաձայնեցվել Սպասարկող ընկերության հետ,

զ) ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում և մինչև մշտական բնակության երկիր վերադառնալը դեղորայքի ավելի մեծ քանակով ձեռք բերման հետ, քան նշանակված է բժշկի կողմից,

է) ավելի մեծ ծավալով բժշկական օգնության ցուցաբերման հետ, քան անհրաժեշտ է Անհետաձգելի բժշկական օգնության ցուցաբերման համար,

ը) կանխարգելիչ բժշկական ստուգումների, պատվաստումների, խնամքի, Կլինիկայից դուրս բժշկական ծառայությունների իրականացման հետ,

թ) առանց բժշկական ցուցումների ծառայությունների ստացման հետ, այդ թվում նաև Ապահովագրված անձի ցանկությամբ,

ժ) Կլինիկայում Ապահովագրված անձին առավել հարմարավել պայմանների տրամադրման հետ՝ առանձին և յուրաքանչյուր հիվանդասենյակ, հեռախոս, հեռուստացույց, թարգմանիչ և այլն,

ի) հակաբեղմնավորման, ստերոիդացման, անպտղության բուժման, բեղմնավորման կամ արհեստական վերարտադրության այլ ձևերի հետ,

լ) ստացիոնար, բժշկա-տրանսպորտային, տրանսպորտային, հետմահու հայրենադարձման հետ, որոնք չեն կազմակերպվել և/կամ նախապես չեն համաձայնեցվել Սպասարկող ընկերության կողմից,

խ) պլանային կարգով (այդ թվում՝ պլանային վերահսկման նպատակով) իրականացվող խորհրդատվությունների և հետազոտությունների հետ, որոնք կարող են հետաձգվել մինչև Ապահովագրված անձի Ուղևորության ավարտը,

ծ) վերականգնողական բուժման, ֆիզիոթերապիայի, կազդուրողական միջոցառումների, սանատոր-կուրորտային բուժման, այլընտրանքային բժշկության մեթոդների, օրթոպեդիկ վիրաբուժության, ալլոպատիայի հետ,

կ) բժշկական սարքերի ձեռք բերման, վարձակալության, վերանորոգման և հարմարեցման, ինչպես նաև պրոթեզների, ակնոցների, կոնտակտային լինզաների, լսողական և այլ բժշկական սարքերի ձեռքբերման հետ,

հ) Սպասարկող ընկերության կողմից առաջարկվող ծառայություններից հրաժարվելու կամ առանց Սպասարկող ընկերության և/կամ Ապահովագրողի հետ նախապես համաձայնեցված բժշկական ծախսերի հետ (բացառությամբ **16.4.2.17.** կետով սահմանված պահանջները բավարարող դեպքերի):

16.4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

16.4.1. Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը իրականացնում է Ապահովագրական հատուցում՝ վճարման միջոցով և/կամ փոխհատուցելով բժշկական կամ այլ ծախսերը, որոնք կազմակերպվել կամ նախապես համաձայնեցվել են Սպասարկող ընկերության կողմից՝

16.4.1.1. Սպասարկող ընկերությանը՝ վերջինիս կողմից կազմակերպված բժշկական և այլ ծառայությունների, ինչպես նաև սպասարկման ծախսերի դիմաց,

16.4.1.2. Ապահովագրված անձին՝ փոխհատուցելով վերջինիս կողմից կատարված ծախսերը, եթե նա ինքնուրույն է կատարել դրանք և ներկայացրել է Ապահովագրողին սույն Պայմաններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ Ապահովագրողի կողմից փոխհատուցման հարցը ուսումնասիրելու համար:

16.4.2. Ապահովագրված անձն իր կողմից կատարված ծախսերի Ապահովագրողի կողմից փոխհատուցման հարցի ուսումնասիրության համար, պետք է Ուղևորությունից վերադառնալուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը (եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանների 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ Բաժիններով)՝

16.4.2.1. գրավոր դիմում՝ տեղի ունեցած պատահարի վերաբերյալ, այդ թվում Սպասարկող ընկերություն չդիմելու հիմնավորմամբ,

16.4.2.2. ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը,

16.4.2.3. բժշկական փաստաթղթերը, որոնք պետք է ներառեն Ապահովագրված անձի տվյալները, դիմելու ամսաթիվը, առողջական զանգատները/վիճակը, ախտորոշումը և ցուցաբերված բժշկական օգնությունը, իսկ հիվանդանոցային բուժման դեպքում նաև բուժման ընդհանուր տևողությունը,

16.4.2.4. բժշկի կողմից նշանակված դեղորայքի ձեռք բերման բաղադրատոմսը՝ Ապահովագրված անձի անուն/ազգանունի, դեղորայքի անվանման, չափաբաժնի և քանակության նշումով,

16.4.2.5. հաշիվ-ապրանքագրի և/կամ ֆինանսական այլ փաստաթղթի բնօրինակը, որը պետք է ներառի Ապահովագրված անձի տվյալները և տրամադրված բժշկական ծառայությունների ցանկը՝ յուրաքանչյուր ծառայության համար առանձին նշված գներով և իրականացման ամսաթվերով,

16.4.2.6. բժշկական փաստաթղթերի հայերեն թարգմանությունները, որոնք պետք է հաստատված լինեն թարգմանչի կնիքով (անգլերեն և ռուսերեն լեզուներով տպագրված փաստաթղթերի համար թարգմանություն չի պահանջվում):

16.4.2.7. բժշկի կողմից նշանակված դեղամիջոցների և անշարժացնող պարագաների ձեռքբերման ծախսերը հավաստող ֆինանսական փաստաթղթերը (<ԴՄ կտրոն և այլն) և դրանց Ապահովագրված անձին նշանակված լինելը հավաստող փաստաթղթերը (դեղատոմսեր և այլն),

16.4.2.8. տրանսպորտային և այլ ընկերությունների հաշիվները, որոնց ծառայություններից օգտվել է Ապահովագրված անձը,

16.4.2.9. հայրենադարձում կազմակերպող կազմակերպությունների հաշիվները, այդ թվում նաև հետմահու՝ ամսաթվի, ծառայությունների անվանման և արժեքի նշումով,

16.4.2.10. ճամփորդական փաստաթղթերը,

16.4.2.11. նստեցման կտրոնները,

16.4.2.12. Ապահովագրված անձի հետ Մերձավոր հարգատ լինելու փաստը հավաստող փաստաթղթեր,

16.4.2.13. ծննդյան վկայական, խնամակալության վերաբերյալ փաստաթուղթ՝ անչափահասների/ անգործունակ անձանց շահերը ներկայացնելու դեպքում,

16.4.2.14. Սպասարկող ընկերություն զանգելու ծախսերը հիմնավորող փաստաթղթեր,

16.4.2.15. Պայմանագրով/վկայագրով նախատեսված այլ ծառայությունների համար կատարած վճարումները և կրած վնասները հավաստող հիմքերը և ֆինանսական փաստաթղթերը (ցանկը ներկայացված է համապատասխան ծածկույթներում),

16.4.2.16. Դժբախտ պատահարի դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված եզրակացություն՝ դեպքը տեղի ունենալու հանգամանքների և ժամանակի, ստացված մարմնական վնասվածքների բնույթի վերաբերյալ (ըստ Ապահովագրողի պահանջի),

16.4.2.17. Սպասարկող ընկերությանը կամ Ապահովագրողին Ապահովագրական պատահարի մասին սույն Պայմաններով նախատեսված կարգով չտեղեկացնելու դեպքում՝ տեղեկացնելու անհնարինությունը հիմնավորող փաստաթղթերը,

16.4.2.18. Հայրենադարձման կապակցությամբ՝ Ապահովագրած անձի վերադարձի չօգտագործված և նոր տոմսերը, ինչպես նաև տոմսը փոխելու համար կատարված լրավճարը հավաստող ֆինանսական փաստաթուղթ,

16.4.2.19. Ապահովագրված անձի Ուղևորությունից վաղաժամկետ վերադարձի դեպքում՝ էպիկրիզ/քաղվածք բժշկական հաստատությունից հիվանդի ստացիոնար քարտից՝ հաստատված բժշկական հաստատության կնիքով և Բժշկի ստորագրությամբ, Մերձավոր հարազատի մահվան վկայականը, բժշկական եզրակացություն մահվան վերաբերյալ, Ապահովագրված անձի և իր ընտանիքի անդամի բարեկամական կապը հաստատող փաստաթղթեր:

16.4.3. Ապահովագրական պատահարի հանգամանքները պարզաբանելու համար Ապահովագրողն իրավունք ունի ստուգել տրամադրված փաստաթղթերի իսկությունը, կատարել լրացուցիչ հարցումներ օգնություն ցուցաբերած բժիշկներից և այլ կազմակերպություններից, իրականացնել Ապահովագրված անձի բժշկական փորձաքննություն:

16.4.4. Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողն ընդունում է որոշում՝ Ապահովագրական հատուցում տրամադրելու, հետաձգելու կամ մերժելու վերաբերյալ:

16.4.5. Եթե ներկայացված ծախսերը ենթակա են հատուցման, Ապահովագրողը լրացուցիչ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վճարում է Ապահովագրված անձին հատուցման ենթակա գումարը՝ հատուցման դիմումի մեջ նշված եղանակով:

16.4.6. Եթե Ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած ծախսերը հատուցման ենթակա են երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրության կամ այլ

պայմանագրով, ապա Ապահովագրողը վճարում է միայն այդ պայմանագրով սահմանված հատուցման սահմանաչափը գերազանցող ծախսերը:

16.4.7. Եթե Պայմանագրով նախատեսված է Չհատուցվող գումար (Ֆրանշիզա), ապա յուրաքանչյուր տեղի ունեցած Ապահովագրական պատահարի համար Ապահովագրողի կողմից վճարվող ապահովագրական հատուցումը նվազեցվում է Չհատուցվող գումարի չափով՝ յուրաքանչյուր Ապահովագրական ծածկույթի (ռիսկի) շրջանակներում:

16.4.8. Ապահովագրական հատուցում վճարելուց հետո Ապահովագրողին ներկայացված ֆինանսական փաստաթղթերի բնօրինակները վերադարձման ենթակա չեն:

ԲԱԺԻՆ 3

17. ՈՒՂԵՔԵՌԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

17.1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՔՅԵԿՏ

Սույն բաժնով Ապահովագրության օբյեկտ է հանդիսանում Ապահովադրի (Ապահովագրված անձի) գույքային շահերը, կապված իրեն պատկանող Ուղեքեռի տնօրինման, օգտագործման և տիրապետման հետ:

17.2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ԵՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԵՐ

17.2.1. Ապահովագրական պատահար է համարվում Ուղևորության ժամանակ տեղի ունեցած և փաստաթղթորեն հաստատված հետևյալ իրադարձությունները՝

17.2.1.1. Ուղևորությունն իրականացնող Փոխադրողին (այսուհետ՝ Փոխադրող) հանձնած և գրանցված Ուղեքեռի կորուստը: Ուղեքեռի կորստի դեպքում հատուցումն իրականացվում է 40 (քառասուն) ՊՄ համարժեք գումարի չափով կորած Ուղեքեռի յուրաքանչյուր կիլոգրամի համար, բայց ոչ ավել քան 500 ՊՄ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

17.2.1.2. Ուղևորությունն իրականացնող Փոխադրողին (այսուհետ՝ Փոխադրող) հանձնած և գրանցված Ուղեքեռի ամբողջական կամ մասնակի ոչնչացումը: Ուղեքեռի ոչնչացման, մասնակի ոչնչացման կամ վնասման դեպքում Ապահովագրողը հատուցում է 7 (յոթ) ՊՄ համարժեք գումարի չափով յուրաքանչյուր վնասված/ոչնչացված կիլոգրամի համար, բայց ոչ ավել քան վնասի գումարի չափը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Սույն կետով հատուցման ենթակա չէ Ուղեքեռը տեղավորելու համար նախատեսված ճամպուրկի/պայուսակի վնասման հետ կապված ծախսերը: Բոլոր դեպքերում, Ուղեքեռի մեկ կտորի բոլոր ոչնչացված կամ վնասված իրերի մասով Ապահովագրական հատուցումը չի կարող գերազանցել 500 ՊՄ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

17.2.1.3. Ուղևորությունն իրականացնող Փոխադրողին (այսուհետ՝ Փոխադրող) հանձնած և գրանցված Ուղեքեռի ուշացումը: Ուղեքեռի ուշացման 5-րդ ժամից սկսած յուրաքանչյուր հաջորդ ժամվա համար Ապահովագրողը վճարում է 2 (երկու) ՊՄ համարժեք գումարի չափով Ուղեքեռի յուրաքանչյուր կիլոգրամի համար, սակայն ոչ ավել քան 160 (մեկ հարյուր վաթսուն) ՊՄ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

17.2.2. Պայմանագրի գործողության ընթացքում սույն ծածկույթով իրականացված բոլոր հատուցումների առավելագույն չափը չի կարող գերազանցել 1,000 ՊՄ:

17.2.3. Եթե Ապահովագրված անձն իր Ուղեքեռի ուշացման, կորստի կամ ոչնչացման արդյունքում ստացել է հատուցում նաև Փոխադրողի կողմից, Ապահովագրողը վճարում է սույն ծածկույթով նախատեսված և Փոխադրողի կողմից վճարված հատուցման դրական տարբերությունը:

17.2.4. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կարող է կնքվել ինչպես **17.2.1.1.-17.2.1.3** կետերով նախատեսված բոլոր ռիսկերի, այնպես էլ դրանցից մեկի կամ մի քանիսի համար:

17.3. ԲԱՅԱՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ՝

17.3.1. Ուղեբեռի կորուստը, ամբողջական վնասումը, որի կորստի կամ ամբողջական վնասման փաստը բացահայտելու պահից 24 ժամվա ընթացքում չի տեղեկացվել Փոխադրողի պատասխանատու անձանց,

17.3.2. Ապահովագրված անձի իր մշտական բնակության երկիր վերադառնալիս տեղի ունեցած Ուղեբեռի ուշացումը,

17.3.3. Ուղեբեռի ամբողջական կամ մասնակի ոչնչացմանը նպաստող Ապահովագրված անձի դիտավորյալ գործողությունների կամ անգործության, իրերի տեղափոխման կանոնները չպահպանելու հետևանքով առաջացած վնասը,

17.3.4. իրավասու մարմինների կողմից տրված հանձնարարության հետևանքով Ուղեբեռի բռնագրավումը կամ ոչնչացումը,

17.3.5. Փոխադրողին չհանձնած Ուղեբեռի (ծեռքի ուղեբեռի) կորուստը կամ ոչնչացումը,

17.3.6. ջերմաստիճանի, խոնավության կամ բնական հատկությունների ազդեցության հետևանքով առաջացած վնասը, որը կարող է բերել Ուղեբեռի վնասման կամ փչացման,

17.3.7. աղտոտման, պակասորդի արդյունքում առաջացած վնասը՝ արտաքին փաթեթավորման ամբողջականության դեպքում,

17.3.8. Ուղեբեռի մաշվածության, ժանգոտվածության, բորբոսի, գունաթափման և ապահովագրված գույքի այլ բնական փոփոխությունների, քերծվածքների, ներկաձածկույթի վնասները,

17.3.9. կրծողների և միջատների կողմից հասցված վնասները,

17.3.10. ցանկացած արժույթով կանխիկ գումարը, արժեթղթերը, զեղչային կամ բանկային քարտերը,

17.3.11. թանկարժեք, կիսաթանկարժեք մետաղներից և քարերից զարդերը, թանկարժեք ձուլակտորները, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերը՝ առանց շրջանակների,

17.3.12. անտիկվար, հնաոճ իրերը և եզակի ապրանքները, արվեստի գործերը և հավաքածուները,

17.3.13. ճանապարհորդական փաստաթղթերը, անձնագրերը և փաստաթղթերի ցանկացած այլ տեսակները, լուսանկարները,

17.3.14. ձեռագրերը, գծագրերը և այլ փաստաթղթերը, հաշվապահական և գործառնական այլ մատյանները,

17.3.15. կենդանիները, բույսերը և սերմերը, մարջանները, սպունգները, խխունջները,

17.3.16. ավտոտրանսպորտային, մոտոցիկլային, հեծանվային, օդային եւ ջրային տրանսպորտի միջոցները, ինչպես նաև դրանց պահեստամասերը,

17.3.17. մորթուց արտադրանքը (բնական եւ արհեստական մորթուց),

17.3.18. շարժական աուդիո, ֆոտո, կինո, վիդեո սարքավորումները, անհատական համակարգիչները, նոթբուքերը, համակարգչային և ծրագրային համակարգերը, գրամեքենաները և նրանց ցանկացած պարագաները,

17.3.19. կրոնական պաշտամունքի առարկաները,

17.3.20. փոխադրման համար արգելված և կանոնների խախտմամբ տեղափոխվող իրերը,

17.3.21. սննդի, հեղուկների, ծխախոտին հասցված վնասը:

17.4. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

17.4.1. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը Ուղեբեռի մասով գործում է բացառապես միայն Փոխադրողի պատասխանատվության տակ գտնվելու

ժամանակահատվածում՝ Փոխադրողի կողմից Ուղեբեռի գրանցման և ընդունման պահից մինչև Ապահովագրված անձի կողմից ստանալու պահը:

17.5. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ Ի ՀԱՅՏ ԳԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

17.5.1. Ուղեբեռի բացակայությունը կամ ոչնչացումը հայտնաբերելու պահից Ապահովագրված անձը պարտավոր է՝

- այդ մասին 24 ժամվա ընթացքում հայտնել Փոխադրողին և պահանջել իր Ուղեբեռի ուշացման, կորստի, ամբողջական կամ մասնակի ոչնչացման վերաբերյալ գրավոր եզրակացությունը,
- համապատասխան կարգով ձևակերպել իր պահանջը Փոխադրողի նկատմամբ և Փոխադրողի պատասխանատու անձանցից ստանալ գեկույց (ակտ)՝ Ուղեբեռի վնասման, կորստի կամ ամբողջական ոչնչացման փաստի վերաբերյալ:

17.5.2. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրված անձը իր մշտական բնակության երկիր վերադառնալու օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում պետք է Ապահովագրողին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- ա) ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը,
- բ) անձը հաստատող փաստաթուղթը,
- գ) Ապահովագրողի սամանած ձևով գրավոր դիմում, որտեղ պետք է նկարագրվի Ապահովագրական պատահարի բնույթը, հանգամանքները և ամսաթիվը, ինչպես նաև կորած կամ վնասված իրերի ցանկը,
- դ) թռիչքի տոմսի (նստեցման կտրոնի) և Ուղեբեռի ստացականի բնօրինակները,
- ե) Ուղեբեռի վնասումը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ կազմողի կողմից վավերացված պատճենը (Ուղեբեռի վնասման կոմերցիոն ակտ (property irregularity report)), կամ Ուղեբեռի ուշացումը, կորուստը, ոչնչացումը կամ մասնակի վնասումը հավաստող պատկան մարմինների կողմից տրված տեղեկանք,
- զ) Փոխադրողից և/կամ երրորդ անձանցից հատուցում ստանալու դեպքում՝ այդ հատուցումը փաստող ֆինանսական փաստաթուղթը, իսկ այն մերժելու դեպքում՝ մերժման գրավոր հիմնավորումը:

ԲԱԺԻՆ 4

18. ՓԱՏԱԹՂԹԵՐԻ ԿՈՐՈՒՍՏ ԿԱՄ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

18.1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

18.1.1. Սույն բաժնով Ապահովագրական պատահար է համարվում Ուղևորության ժամանակ Ապահովագրված անձին պատկանող անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր) և ճամփորդական փաստաթղթերի գողությունը կամ կորուստը, որի պատճառով վերջինիս Ուղևորության շարունակությունը և/կամ իր մշտական բնակության երկիր վերադառնալը դարձել է անհնար:

18.2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

18.2.1. Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը հատուցում է կորած փաստաթղթերի փոխարինման (վերականգնման) ծախսերի չափով՝ պայմանով, որ Ապահովագրված անձը այդ կորստի հայտնաբերման պահից 24 ժամվա ընթացքում հայտնել է այդ մասին իր գտնվելու երկրի ոստիկանությանը և այդ երկրում վերջինիս մշտական բնակության երկրի հյուպատոսական ծառայություններին (առկայության դեպքում):

18.2.2. Պայմանագրի գործողության ընթացքում 19.2.1 կետով նախատեսված ծախսերը հատուցվում են մինչև 1,000 ՊՄ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

18.3. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

18.3.1. Ապահովագրողը չի հատուցում փաստաթղթերի փոխարինման (վերականգնման) ծախսերը, եթե՝

18.3.1.1. Ապահովագրված անձը իր գույքը թողել է առանց հսկողության հասարակական վայրում,

18.3.1.2. Ապահովագրված անձը չի հայտնել կորստի կամ գողության մասին ոստիկանություն և իր մշտական բնակության երկրի դեսպանատուն/հյուպատոսարանին (առկայության դեպքում)՝ կորուստը կամ գողությունը հայտնաբերելու պահից 24 ժամվա ընթացքում,

18.3.2. Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չէ կորած կամ գողացած փաստաթղթերի փոխարինման (վերականգնման) համար կատարված տրանսպորտային և փոխադրման ծախսերը:

18.4. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ Ի ՀԱՅՑ ԳԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

18.4.1. Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է իր մշտական բնակության երկիր վերադառնալու պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը,

բ) անձը հաստատող փաստաթուղթը,

գ) Ապահովագրողի սամանած ձևով գրավոր դիմում, որտեղ պետք է նկարագրվի Ապահովագրական **պատահարի** բնույթը, հանգամանքները և ամսաթիվը,

դ) փաստաթղթերի կորստի վերաբերյալ ոստիկանության կողմից տրված արձանագրությունը,

ե) փաստաթղթերի կորստի վերաբերյալ հյուպատոսական ծառայությունների կողմից տրված հավաստագիր (առկայության դեպքում),

զ) փաստաթղթերի փախարինման (վերականգնման) համար կատարված վճարումները հավաստող ֆինանսական փաստաթղթերը:

ԲԱԺԻՆ 5

19. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

19.1. Ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ապահովագրության տարածքում փաստացի տեղի ունեցած հանկարծակի, անկանխատեսելի և ոչ դիտավորյալ իրադարձությունը, որի արդյունքում Ապահովագրված անձի մոտ առաջացել է հրատապ իրավաբանական օգնության կարիք՝ Ապահովագրի կողմից երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին անզգուշությամբ վնաս հասցնելու հետևանքով դատական կամ վարչական վարույթի մեջ Ապահովագրված անձին ներգրավման դեպքում:

19.2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

19.2.1. Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է կազմակերպել իրավաբանական օգնության տրամադրումը և հատուցել հետևյալ ծախսերը՝

- Ապահովագրված անձի իրավաբանական խորհրդատվությունները՝ հեռախոսով, էլեկտրոնային փոստով, փաստաբանի գրասենյակում՝ գրավոր կամ բանավոր կարգով,

- վարչական իրավախախտումների, քաղաքացիական կամ քրեական գործերի (եթե Ապահովագրված անձը անցնում է որպես մեղադրյալ, կասկածյալ կամ տուժած) շրջանակներում Ապահովագրված անձի իրավաբանական պաշտպանության հետ կապված ծախսերը: Փաստաբանի և թարգմանչի այցն իրականացվում է ըստ Ապահովագրված անձի գտնվելու երկրում գործող օրենսդրության:

19.2.2. Պայմանագրի գործողության ընթացքում **19.2.1.** կետով նախատեսված ծախսերը հատուցվում են մինչև 1,500 ՊՄ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

19.2.3. Իրավաբանական օգնության որակի համար պատասխանատվություն է կրում այդ օգնությունը ցուցաբերած անձը:

19.3. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

Հատուցման ենթակա չեն այն ծախսերը, որոնք հետևանք են՝

19.3.1. Ապահովագրված անձի կանխամտածված գործողությունների (բացառությամբ անհրաժեշտ ինքնապաշտպանության) կամ անգործության,

19.3.2. Ապահովագրված անձի կողմից երրորդ անձի պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին հասցված վիրավորանքի, արատավորող տեղեկություններ կամ զրպարտություն տարածելու,

19.3.3. Ապահովագրված անձին ահաբեկչական գործողություններում մասնակցության մեղադրանք ներկայացնելու,

19.3.4. Ապահովագրված անձի ընտանիքի անդամներին, ընկերներին, ուղեկիցներին ցուցաբերված իրավաբանական օգնության,

19.3.5. Ապահովագրողի կամ Սպասարկող ընկերության կողմից չկազմակերպված իրավաբանական օգնության, որոնց համար Ապահովագրված անձը վճարել է ինքնուրույն,

19.3.6. Ապահովագրված անձի կողմից ավտոտրանսպորտային միջոցների, երկաթուղային, օդային կամ ջրային տրանսպորտային միջոցների շահագործման,

19.3.7. Ապահովագրված անձի սպառողական իրավունքների պաշտպանության:

19.4. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ Ի ՀԱՅՑ ԳԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

19.4.1. Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է անհապաղ (իր դեմ բողոք, պահանջ կամ հայտարարություն ներկայացնելու պահից 24 ժամվա ընթացքում)՝

- զանգահարել Սպասարկող ընկերություն՝ Վկայագրում նշված հեռախոսահամարներից որևէ մեկով,

- կատարել Սպասարկող ընկերության աշխատակցի կողմից տրված բոլոր հրահանգները,

- հետևել իրավաբանական օգնություն ցուցաբերող անձանց խորհուրդներին, անհրաժեշտության դեպքում՝ տրամադրել նրանց լիազորագիր:

19.4.2. Ապահովագրված անձի կողմից **19.4.1.** կետով նախատեսված պայմանները խախտելու դեպքում Ապահովագրողը չի վճարում իրավաբանական օգնության տրամադրման համար նախատեսված ծախսերը:

ԲԱԺԻՆ 6

20. ԶՎԵՐԹԻ ՀԵՏԱԶԳՈՒՄ

20.1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

20.1.1. Սույն բաժնի համաձայն Ապահովագրական պահատար է համարվում Ուղևորության շրջանակներում նախատեսված կանոնավոր միջազգային (Հայաստանի Հանրապետությունից

դեպի Ապահովագրության տարածք և Ապահովագրության տարածքի ներսում) կամ տեղային (միայն Ապահովագրության տարածքի ներսում) չվերթի, որին Ապահովագրված անձը ամրագրել է Ուղևորություն, 4 և ավել ժամով հետաձգումը, որը կապված է՝

- ա) ավիաընկերության, օդանավակայանի աշխատակիցների գործադուլի,
- բ) վատ եղանակային պայմանների,
- գ) օդանավի կամ ջրային տրանսպորտի մեխանիկական կամ տեխնիկական վնասների/խնդիրների:

20.2. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

20.2.1. Օդանավով ճանապարհորդելու դեպքում՝ Ապահովագրված անձը պետք է գրանցվի թռիչքին ըստ սահմանված ժամանակացույցի:

20.2.2. Ապահովագրված անձը պետք է Փոխադրողից ստանա ուշացման վերաբերյալ գրավոր հաստատում՝ դրա տևողության և պատճառի նշումով,

20.2.3. Ապահովագրված անձը պետք է հետևի Տուրօպերատորի, Տուրիստական գործակալության կամ Փոխադրողի պայմանագրի պայմաններին:

20.3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, հատուցումները վճարվում են համաձայն ստորև նշված սահմանաչափերի՝

20.3.1. չվերթի հետաձգման 5-րդ ժամից սկսած յուրաքանչյուր հաջորդող ժամվա համար Ապահովագրողը վճարում է 25 ՊՄ, առավելագույնը՝ մինչև 280 ՊՄ,

20.3.2. Եթե Ապահովագրված անձը չվերթի հետաձգման արդյունքում ստացել է հատուցում նաև Փոխադրողի կամ այլ անձանց կողմից, Ապահովագրողը վճարում է Ապահովագրված անձին սույն ծածկույթով նախատեսված և Փոխադրողի կողմից վճարված հատուցման դրական տարբերությունը:

20.4. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

Հատուցման ենթակա չէ այն վնասը, որը հետևանք է՝

20.4.1. Ապահովագրված անձի այդ չվերթին գրանցմանը ժամանակին չներկայանալու,

20.4.2. Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին և/կամ տոմսի ամրագրման պահին հայտարարված գործադուլի:

20.4.3. Օդային կամ ջրային փոխադրամիջոցի ժամանակավոր կամ վերջնական շահագործումից հանելուն՝ ավիացիայի, նավահանգստի կառավարման կամ նմանատիպ այլ մարմնի առաջարկությունների համաձայն,

20.4.4. Ապահովագրված անձը չի ստացել գրավոր հաստատում Փոխադրողից կամ համապատասխան մարմնից հետաձգման պատճառների և ժամանակի վերաբերյալ:

20.5. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ Ի ՀԱՅՏ ԳԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

20.5.1. Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովագրված անձը իր մշտական բնակության երկիր վերադառնալու պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում պետք է Ապահովագրողին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

- ա) ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը,
- բ) անձը հաստատող փաստաթուղթը,
- գ) Ապահովագրողի սամանած ձևով գրավոր դիմում,
- դ) ճամփորդական փաստաթղթերը (տոմսը),

ե) Փոխադրողի կողմից տրված պաշտոնական եզրակացությունը, որը փաստում է չվերթի հետաձգումը և ներառում է այդ հետաձգման պատճառը և տևողությունը, հետաձգման հետևանքով իր կողմից վճարված հատուցման չափը կամ այդ հատուցման մերժման փաստը:

ԲԱԺԻՆ 7.

21. ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՉԵՂԱՐԿՈՒՄ

21.1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏ

21.1.1. Ապահովագրության օբյեկտ է հանդիսանում Ապահովադրի (Ապահովագրված անձի) գույքային շահերը՝ կապված Ապահովագրական պատահարի հետևանքով Ուղևորության չեղարկման հետ:

21.2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՏԱՐ

Սույն բաժնի համաձայն Ապահովագրական պատահար է համարվում՝

21.2.1. նախատեսված Ուղևորության իրականացման անհնարինությունը, որը հետևանք է հետևյալ պատճառներից որևէ մեկի, եթե այդ պատճառը առաջացել է ոչ շուտ, քան ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց 24 ժամ հետո՝

ա) Ապահովագրված անձի կամ վերջինիս ընտանիքի անդամներից որևէ մեկի (կին/ամուսին, երեխաներ, ծնողներ, քույրեր կամ եղբայրներ) Ուղևորության գործողության ամսաթվի սկզբի պահին առողջության վատթարացման կամ դժբախտ պատահարի հետևանքով հրատապ հոսպիտալացման կամ մահվան: Ընդ որում հիվանդի հոսպիտալացումը՝ շուրջօրյա բժշկական օգնության և խնամքի կազմակերպումը, պետք է տևի առնվազն երկու օր՝ տվյալ գործունեության համար հատուկ սարքավորումներով հագեցած բժշկական հաստատությունում,

բ) Ապահովագրված անձի կամ վերջինիս ընտանիքի անդամներից որևէ մեկի (կին/ամուսին, երեխաներ, ծնողներ, քույրեր կամ եղբայրներ) դժբախտ պատահարի հետևանքով ստացած վնասվածքների, բայց միայն այն դեպքում, եթե առկա է բժշկական հակացուցում պլանավորված Ուղևորությունը իրականացնելու համար,

գ) Ապահովագրված անձի պլանավորված Ուղևորության իրականացման անհնարինությունը Ապահովագրված անձին պատկանող անշարժ գույքի հրդեհի հետևանքով վնասման (ոչնչացման) պատճառով,

21.2.2. Ապահովագրողը հատուցում է Ապահովագրված անձի Ուղևորության չկայացման հետևանքով նախապես վճարված Ուղևորության տոմսերի վերադարձի և հյուրանոցային համարների ամրագրումը չեղարկելու հետ կապված ծախսերը,

21.2.3. Բոլոր դեպքերում, Ուղևորության մեկնող ընտանիքի բոլոր անդամների համար միասին (կին/ամուսին, երեխաներ, ամուսինների ծնողներ, քույր և եղբայր)՝ "Ուղեվորության չեղարկում" դիսկի գծով՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում սույն ծածկույթով բոլոր հատուցումների առավելագույն չափը չի կարող գերազանցել 1,000 ՊՄ:

21.3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

21.3.1. Ապահովադիրը Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը պետք է կնքի Տուրիստական փաթեթը ձեռք բերելու կամ տոմսը/հյուրանոցը ամրագրելու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան Ուղևորության մեկնելու ամսաթվից 5 օր առաջ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

21.3.2. Սույն Բաժնի ծածկույթով ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը ուժի մեջ է մտնում կնքմանը հաջորդող ամսաթվի ժամը 00:00-ից և գործում է մինչև Ուղևորության սկիզբը:

21.4. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

21.4.1. Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է անմիջապես, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում հայտնել այդ մասին Ապահովագրողին Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրողի շուրջօրյա հեռախոսահամարով:

21.4.2. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով պարտավոր է Ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո 30 օրվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

21.4.2.1. Ապահովագրողի սամանած ձևով գրավոր դիմում,

21.4.2.2. ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը,

21.4.2.3. Տուրիստական փաթեթի պայմանագրի բնօրինակը, ներառյալ բոլոր հավելվածները և ամրագրման էջը կամ տրանսպորտային ընկերության ճամփորդական փաստաթղթերը (տոմս),

21.4.2.4. Տուրիստական փաթեթի պայմանագրի վճարումը հավաստող ֆինանսական փաստաթղթերի բնօրինակները

21.4.2.5. Տուրիստական գործակալության կամ Տուրօպերատորի ֆինանսական գրությունը՝ Ուղևորության չեղարկման հետ կապված կիրառված տուգանքների մասին նշումով,

21.4.2.6. Ապահովագրված անձի կողմից Տուրիստական փաթեթի ինքնուրույն ամրագրման դեպքում բանկի կողմից պատշաճ վավերացված և Ապահովագրողի կողմից վճարումը հավաստող ֆինանսական փաստաթղթերի բնօրինակները (հաշիվներ, քաղվածքներ բանկային հաշվից, վճարման հանձնարարականներ), այն ծառայությունների համար, որոնցից օգտվել է Ապահովագրված անձը և/կամ պետք է օգտվեր Ուղևորությունը կազմակերպելու համար, Ուղևորության չեղարկման հետ կապված կիրառված տուգանքների մասին հաստատումով, ամրագրված հյուրանոցից հրաժարման վերաբերյալ նշումով: Ֆինանսական փաստաթղթերը պետք է պարունակեն գումարը ստացողի անվանումը և տվյալները,

21.4.2.7. անմիջականորեն ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից (հյուրանոց, Փոխադրող և այլն) վերադարձը հաստատող փաստաթղթերը,

21.4.2.8. ամրագրման հաստատման բնօրինակը՝ նույնականացման համարով կամ կողով, ստացողի մասին նշումով, ամրագրման արժեքով և ամրարման պայմանների մասին հղումով:

21.4.2.9. Ապահովադիր (Ապահովագրված անձանց) արտասահման մեկնելու անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը,

21.4.2.10. Ուղևորության մասնակիցների անուն, ազգանուն, հայրանունները, անձը հաստատող փաստաթղթերը,

21.4.2.11. Տուրիստական գործակալությունից/Տուրօպերատորից ստացած դրամական միջոցների չափը՝ դրամական միջոցների ստացման ամսաթվի նշումով,

21.4.2.12. Տուրիստական գործակալության/Տուրօպերատորի կողմից Տուրիստական փաթեթի չեղարկման ամսաթիվը,

21.4.2.13. յուրաքանչյուր ծառայության համար կիրառված տույժերի հաշվարկը՝ ամրագրման թերթիկի համաձայն,

21.4.2.14. Տուրիստական գործակալության/Տուրօպերատորի կողմից վերադարձված գումարը՝ ամսաթվի և ստացողի մասին նշումով,

21.4.2.15. ճամփորդական փաստաթղթերը (տոմսը/տոմսերը),

21.4.2.16. Ապահովագրված անձի կամ վերջինիս ընտանիքի անդամի մահվան, հիվանդության կամ վնասվածքի հետևանքով Ուղևորության անհնարինության դեպքում, որը պահանջում է հոսպիտալացում Ուղևորության սկզբի ամսաթվի պահի դրությամբ՝ էպիկրիզ/քաղվածք բժշկական հաստատությունից հիվանդի ստացիոնար քարտից՝ հաստատված բժշկական հաստատության կնիքով և Բժշկի ստորագրությամբ, մահվան վկայական, բժշկական

եզրակացություն մահվան վերաբերյալ, Ապահովագրված անձի և իր ընտանիքի անդամի բարեկամական կապը հաստատող փաստաթղթեր,

21.4.2.17. Ապահովագրված անձի կամ վերջինիս ընտանիքի անդամի վնասվածքի հետևանքով (որը ուղեկցվում է ոսկորների կտրվածքով) Ուղևորության անհնարինության դեպքում, որը տեղի է ունեցել մինչև Ուղևորության ամսաթվի սկիզբը և պահանջում է ստացիոնար բուժում՝ էպիկրիզ/քաղվածք բժշկական հաստատությունից հիվանդի ստացիոնար քարտից՝ հաստատված բժշկական հաստատության կնիքով և Բժշկի ստորագրությամբ, ռենտգեն հետազոտության նկարները և/կամ այլ գործիքային հետազոտությունների եզրակացությունները, Ապահովագրված անձի և իր ընտանիքի անդամի բարեկամական կապը հաստատող փաստաթղթեր,

21.4.2.18. Ապահովագրված անձին պատկանող անշարժ գույքի վնասման դեպքում, որը հետևանք է հրդեհի՝ պատկան/իրավասու մարմինների կողմից տրված պատճառված վնասի փաստը հավաստող ակտ/եզրակացություն:

21.5. Ապահովագրված անձը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում հայտնել Տուրիստական գործակալությանը/Տուրօպերատորին Ուղևորության չեղարկման մասին՝ կիրառվող տույժերը հնարավորինս նվազեցնելու համար և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ Տուրստական փաթեթը (ամրագրված տոմսերը, հյուրանոցը) ժամանակին անվավեր ճանաչելու համար: Ապահովագրի (Ապահովագրված անձի) սույն կետով սահմանված պահանջը չկատարելու դեպքում Ապահովագրողը իրեն իրավունք է վերապահում ամբողջությամբ կամ մասնակի մերժել Ապահովագրական հատուցումը: Ապահովագրողը նաև իրավունք ունի սույն կետով սահմանված պահանջները չկատարելու դեպքում ինքուրույն կատարել կիրառվող տույժերի հաշվարկը՝ Տուրիստական գործակալության/Տուրօպերատորի կողմից կիրառվող տույժերի սանդղակին համաձայն և իրականացնել Ապահովագրական հատուցում տվյալ հաշվակի հիման վրա

21.6. Ապահովագրողի կողմից Ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշումը կայացվում է սույն Բաժնով սահմանված բոլոր պահանջվող փաստաթղթերի ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում:

21.7. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏՈՒՑՎՈՂ ԾԱԽՍԵՐ

Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն ծախսերը, որոնք հետևանք են՝

21.7.1. Տուրօպերատոր/Տուրիստական գործակալության պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման,

21.7.2. Տուրօպերատոր/Տուրիստական գործակալություն չհանդիսացող կազմակերպությունների, անհատ ձեռներեցների կամ անհատների կողմից ձևակերպված Ուղևորության,

21.7.3. Ապահովագրված անձի սխալ անձնագրով, ճամփորդական փաստաթղթերով, տուրիստական ուղեգրով ձևակերպման,

21.7.4. Տուրիստական գործակալության/Տուրօպերատորի, հյուրանոցի սնանկության, լուծարման, ֆինանսական անկայունության,

21.7.5. Ապահովագրված անձի և/կամ նրա ընտանիքի անդամների հոսպիտալացումից հրաժարվելու,

21.7.6. Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամներից մեկի հղիության՝ անկախ ժամկետից, Քրիոնիկ հիվանդության, օնկոլոգիական հիվանդության և դրանց սրացման/բարդացման,

21.7.7. ինքնաբուժումը, Ապահովագրված անձի ընտանիքի անդամի կողմից բուժման նշանակումը և անցկացումը,

21.7.8. ցերեկային ստացիոնարի շրջանակներում անցկացվող բուժումը,

21.7.9. ցանկացած առողջական խնդրի առաջացումը, որը կապված է ատամնաբուժական օգնության հետ,

21.7.10. մինչև Ապահովագրության տարածք մուտք գործելը Ուղևորության համար անհրաժեշտ պատվաստում չստանալու,

21.7.11. Ապահովագրված անձի կողմից Տուրիստական փաթեթը կամ տոմսը և հյուրանոցը ստացիոնար բուժում ստանալու ընթացքում ձեռք բերելու:

21.8. Հատուցման ենթակա չեն այն ծախսերը, որոնք առաջացել են Ուղևորության տոմսերի ամրագրման ամսաթվից առաջ ախտորոշված հիվանդությունների և դրանց բարդությունների արդյունքում:

21.9. Ապահովագրական պատահար չի համարվում և Ապահովագրողը չի հատուցում ծախսերը, եթե Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության ի հայտ գալուց հետո, որը խոչընդոտում է Ուղևորության կայացմանը, Ապահովագրիչը (Ապահովագրված անձը) ժամանակին, բայց ոչ ուշ քան այն տեղի ունենալուց 24 ժամվա ընթացքում չի դիմել Տուրիստական գործակալությանը/Տուրօպերատորին Ուղևորությունը չեղարկելու համար: